

ԿԱՆԱՅՔ,
ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ
ՕՐԱԿԱՐԳ

Միջազգային և տեղական փորձի վերլուծություն



Երևան, 2022

© Սույն հետազոտությունը հանդիսանում է Կանանց ռեսուրսային կենտրոնի (ԿՌԿ) մտավոր սեփականությունը: Չի թույլատրվում օգտագործել, թարգմանել և տարածել հետազոտությունը առանց համապատասխան հղումների:

Հետազոտությունը նախատեսված է պետական քաղաքականություն և օրենսդրություն մշակողների, այս խնդրի շուրջ ադվոկացիա իրականացնող կառույցների և լայն հանրության համար: Առաջին բաժինը՝ ֆեմինիստական գրականության վերլուծությունն իրականացվել է ԿՌԿ-ի կողմից, իսկ երկրորդը՝ հետազոտական մասը պատվիրակվել է անկախ հետազոտողի:

Հարցերի դեպքում կապ հաստատել ԿՌԿ-ի Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմի հետ հետևյալ էլ. հասցեով՝ womenofarmenia@gmail.com

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի վերաբերյալ առկա ֆեմինիստական գրականության վերլուծություն

ԿՌԿ-ի Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմ

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը Հայաստանում. բացեր և հնարավորություններ

Լուսինե Քոսակյան

Սույն հրատարակությունն իրականացվել է Շվեդիայի միջազգային զարգացման համագործակցության գործակալության (SIDA) աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն կրում են բացառապես հեղինակները: SIDA-ն կարող է չկիսել դրանում արտահայտված տեսակետներն ու մեկնաբանությունները:



Շվեդիա
Sverige



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի վերաբերյալ առկա ֆեմինիստական գրականության վերլուծություն.....	4
Ներածություն	4
Դեպի 1325 ճանապարհը և գլոբալ կառավարման համակարգերում փոփոխությունները	6
Գենդերը՝ բռնաճնշող համակարգերի և անձնական գործունեության համատեքստում .	10
Ապակառուցելով գենդերի և հակամարտությունների կապը	14
Եզրակացություն.....	20
Գրականության ցանկ	23
«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը Հայաստանում. բացեր և հնարավորություններ	24
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 թթ. և 2022-24 թթ. ՀՀ գործողությունների ազգային ծրագրի հիմքում ընկած արժեքները (առաջնահերթություններ ու վերջնարդյունքներ)	24
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21թթ. և 1922-24թթ. ՀՀ գործողությունների ազգային ծրագրի նպատակների իրականացման վերջնարդյունքները	27
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 և 2022-24 թվականների ՀՀ գործողությունների ազգային ծրագրերով սահմանված ցուցիչները .	32
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 և 2022-24 թվականների ՀՀ գործողությունների ազգային ծրագրերը գենդերազգայունությունը..	36
2022-24 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի բովանդակային տրամաբանություն	39
Կանայք խաղաղություն և անվտանգություն ազգային ծրագիր ՔՀԿ-ների համար	46
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի 2022-24թթ գործողությունների ազգային ծրագրի հիմնական դերակատարները.....	46
ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի 2022-24թթ գործողությունների ազգային ծրագրի հիմնական թիրախային խմբերը.....	49
Գործողությունների ազգային ծրագրերի մարտահրավերներն ու կարիքները	52
Համագործակցային հնարավորություններ ՔՀԿ-ների համար.....	55
Եզրակացություն.....	62
Առաջարկներ.....	66

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՄԱԿ	Միավորված ազգերի կազմակերպություն
ԱԽ	Անվտանգության խորհուրդ
ԽԱԿՄՄ	Խաղաղության և ազատության կանանց միջազգային միության
ԿԽԱ	Կանայք, խաղաղություն և անվտանգություն
ԳԱԾ	Գործողությունների ազգային ծրագիր
ՆԱՏՕ	Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն
ԼԳՔՏԻ+	Լեսբի, գեյ, բի, տրանս, ինտերսեքս

ՄԱԿ-Ի ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ «ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» N 1325 ԲԱՆԱՁԵՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԿԱ ՖԵՄԻՆԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հեղինակներ՝ ԿՌԿ-ի Շահերի պաշտպանության և քաղաքականության մշակման թիմ

Ներածություն

2000 թվականի հոկտեմբերի 31-ին Միավորված ազգերի կազմակերպության Անվտանգության խորհուրդը միաձայն ընդունեց «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևը (այսուհետ՝ Բանաձև)՝ կոչ անելով ապահովել կանանց առավել գործուն մասնակցություն հակամարտությունների կանխարգելման և կարգավորման հարցերում: ՄԱԿ-ի կողմից Բանաձևը ներկայացվում էր, որպես կարևոր ձեռքբերում, որը կնպաստեր կանանց իրավունքների պաշտպանությանը և կերաշխավորեր նրանց մասնակցությունը խաղաղության գործընթացներում: Բանաձևի ընդունման նախնական շրջանում այն գտնվում էր հանրության, միջազգային և տեղական հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում, քանի որ այն նախադեպային էր ԱԽ-ի համար և հիմնաքարային էր կանանց, խաղաղության և անվտանգության օրակարգի ձևավորման գործում:

Պատմականորեն ՄԱԿ-ի բանաձևերը կանանց ներկայացնում էին, որպես պատերազմի զոհեր, որոնք պաշտպանության կարիք ունեն, սակայն Բանաձևը կանանց ընդունում էր նաև որպես խաղաղաշինության և անվտանգության ապահովման գործակալներ (անգլ. agents): Բանաձևի կարևորությունը նաև նրանում է, որ այն երկարատև ջատագովության և կանանց հարցերով զբաղվող խմբերի

համագործակցության արդյունք է: Բանաձևի ընդունումը շատ ֆեմինիստներ որակել են որպես կարևոր քայլ կանանց հակապատերազմական և խաղաղությանն ուղղված գործունեության համար, քանի որ այն ընդգծում է կանանց և տղամարդկանց ունեցած տարբեր փորձառությունները պատերազմի, հակամարտության և հետհակամարտական շրջաններում, սահմանում է սեռական բռնությունը որպես ռազմական գործիք, ինչպես նաև կարևորում է կանանց դերը հետպատերազմական ժամանակահատվածում հասարակական կյանքի կազմակերպման գործընթացում:

Այնուամենայնիվ, Բանաձևը ոչ միայն ձևավորեց կանանց օրակարգը խաղաղաշինության, խաղաղարարության, խաղաղության պահպանման և անվտանգության գործընթացներում, այլ նաև այն առաջ բերեց մի շարք խնդիրներ հայեցակարգային, քաղաքական և Բանաձևի գործնական կիրառելիության վերաբերյալ: Ֆեմինիստ գիտնականները, փորձագետները և ակտիվիստները կարծում են, որ Բանաձևի կիրառության և աշխարհի տարբեր մասերում կանանց գործունեությանն առնչվող հարցերում՝ գենդերային, խաղաղաշինության և հակամարտությունների կարգավորման մոտեցումների տեսանկյունից այն ունի բացեր (Pratt and Richter-Devroe 2011): Նրանց կողմից բարձրացվում են բանաձևին առնչվող ներքոնշյալ հարցերը, որոնք կարևոր են նրա գործնականում կիրառելիությունը և արդյունավետությունը, ինչպես նաև նպատակայնությունը հասկանալու համար.

- Որքանո՞վ է Բանաձևն իրապես արտացոլվում Գործողությունների ազգային ծրագրերում,
- Ինչպե՞ս են հակամարտության գոտիներում կին ակտիվիստներն առհասարակ օգտվում բանաձևից և ինչպե՞ս են բանաձևի համընդհանուր բնույթը համապատասխանեցնում տեղական համատեքստին,

- Արդյո՞ք հակամարտության վերաբերյալ կանանց փորձառություններն ու դրանց արձագանքը հասկանալու համար գենդերի գերադասումը այլ սոցիալական կատեգորիաների նկատմամբ (ազգություն, էթնիկ պատկանելիություն, սոցիալական դաս կամ կրոն) օգնում, թե՞ խանգարում է կանանց ակտիվիզմին,
- Ի՞նչ հետևանքներ կարող է ունենալ Բանաձևի կենտրոնացումը հակամարտությունների վրա՝ անտեսելով համակարգային բռնության այլ դրսևորումները,
- Ի՞նչ է մեզ հուշում Բանաձևի ձևակերպումը, ընդունումը և կիրառումը հետսառըպատերազմյան համաշխարհային կառավարման (անգլ. global governance) բնույթի մասին:

Դեպի 1325 ճանապարհը և գլոբալ կառավարման համակարգերում

փոփոխությունները

Ֆեմինիստները դեռ 1970-80-ականներին բարձրաձայնում էին սեռական բռնության հիմնախնդիրները, պայքարում Վիետնամի պատերազմի դեմ, վերլուծում կապերը Ասիայում սեքս տուրիզմի աճի և ամերիկյան ռազմաբազաների առկայության միջև, սակայն այս հարցերը երբեք չէին մտնում ՄԱԿ-ի օրակարգ: Բանաձևի ընդունումը տեղի ունեցավ միայն 2000թ. հետսառըպատերազմյան ժամանակահատվածում: Խորհրդային Միության փլուզումից հետո ԱՄՆ-ն սկսեց հանդես գալ ոչ միայն որպես համաշխարհային գերիշխող պետություն, այլև որպես «չեմպիոն» կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարում: Այս համատեքստում հետաքրքրական է այն հարցը, թե ինչու միայն 1989 թվականից հետո ԱՄՆ գլոբալ գերիշխանության ներքո կանանց թրաֆիքինգը, պատերազմի ժամանակ բռնաբարությունները և ընտանեկան բռնությունը կարևոր դարձան ՄԱԿ-ի՝ կանանց հիմնահարցերով զբաղվող սեկտորի համար:

ՄԱԿ-ի գեներալին ուսուցման ձեռնարկը հիշեցնում էր գինվորական խաղաղապահներին, որ հետհակամարտական իրավիճակներում «կանայք՝ պայմանավորված իրենց ընտանիքի տղամարդ անդամների կորստով խոցելի են խտրականության նկատմամբ և հնարավոր է ենթարկվեն մարդու իրավունքների ոտնահարումների» (United Nations 2002): Այս «նոր պատերազմների» իրականությունում «կանանց մարդու իրավունքների» հասկացությունը սովորաբար վերաբերում է կանանց մարմնական ամբողջականության իրավունքին, այլ ոչ թե սոցիալական կամ տնտեսական իրավունքների ավելի լայն հասկացություններին: Այսպիսով, հետսառըպատերազմյան անվտանգության դիսկուրսում «մարդու իրավունքների խախտումներ» եզրույթը սովորաբար նշանակում է մարդու ֆիզիկական՝ այսինքն մարմնի նկատմամբ իրավունքների խախտում, ինչը «Ժողովրդավարության բացակայության» դրոշի ներքո է ներկայացվում: Այս «Ժողովրդավարության բացակայության» դրոշի ներքո էլ հետագայում ՄԱԿ անդամ մի շարք երկրներ ներխուժեցին այլ երկրների տարածք, գաղութացրեցին դրանք, պարտադրեցին սեփական քաղաքական, տնտեսական և հասարակական օրակարգերը: Կանանց իրավունքների նկատմամբ հարգանքի բացակայությունը համարվեց ապացույց, որ այդ երկրները, որտեղ ներխուժում էին «հետամնաց» ու «բարբարոս» են: Համաձայն Պրատտի (2013) հետազոտության, եվրոպացի գաղութարարներն ընդգծեցին գեներալին անհավասարությունը ոչ արևմտյան երկրներում, որպես այդ երկրների բարբարոսության և հետամնացության ապացույց և որպես նրանց գաղութացման հիմնավորում: Հատկապես 2001թ. սեպտեմբերի 11-ից հետո ԱՄՆ-ում նորից առաջ եկավ գաղութարար «ֆեմինիստական» դիսկուրսը աշխարհը բաժանելով նրանց միջև, ովքեր պնդում էին, որ հարգում են կանանց իրավունքներն ու ազատությունները, և նրանց միջև, ովքեր մեղադրվում էին դա չանելու մեջ: Համաձայն հեղինակի, գաղութարար ֆեմինիզմը ռասայականացված դիսկուրսի միջոցով

նորմալացնում է բռնության կիրառումը «ուրիշի» նկատմամբ, մասնավորապես՝ մահմեդական տղամարդկանց, քանի որ, նրանք պնդում են, որ այս տղամարդիկ չգիտեն, թե ինչպես ճիշտ վերաբերվել իրենց կանանց: Նման ենթադրությունները հիմք հանդիսացան «վտանգավոր գունամաշկ՝ տղամարդկանց» սահմանման, ինչն «ահաբեկչության դեմ պատերազմի» անբաժանելի մասն է, քանի որ հենց այս տղամարդիկ են «քաղաքակրթության և ժողովրդավարության առաջամարտիկների» հիմնական թիրախը:

Խոսելով Հետսառըպատերազմյան միջազգային քաղաքականության մասին՝ կարևոր է անդրադառնալ Կանանց ներգրավվածության թիմերին (այսուհետ FET²): Դրանք ստեղծվեցին, որպես ԱՄՆ բանակի մաս 2003 թվականից՝ Իրաքում կանանց հետախուզումը հեշտացնելու համար և որպես այնտեղ իրականացվող հակաապստամբային միջոցառումների մաս: ՆԱՏՕ-ն նպատակ ուներ ավելացնել FET-երի թիվը՝ որպես «փոխվստահության խթանման միջոց, ինչն էական է ապստամբությանը հակազդելու համար»: Այս քայլով, ըստ նրանց, օրինակ՝ Աֆղանստանում իրենք ձեռք են մեկնում աֆղան կանանց, քանի որ ենթադրվում է, որ կին զինվորներն ավելի գերադասելի են, քան տղամարդ զինվորները՝ աֆղան կանանցից հետախուզական տեղեկություններ հավաքելու հարցում, որոնք կարող են օգտակար լինել ՆԱՏՕ-ի զինվորներին «պաշտպանելու» և թալիբ գրոհայիններին գերեվարելու հարցում: Ավելին, կին զինվորները աֆղաներեն կարող էին նաև խոսել կանանց հետ իրենց և իրենց ընտանիքների կարիքների մասին, հատկապես երբ FET-ները օգնում էին կառուցել դպրոցներ և կլինիկաներ, կամ ձեռնարկում էին այլ ծրագրեր կանանց և աղջիկների համար

¹ Այսպես կոչված «Ահաբեկչության դեմ պատերազմը» հիմնականում մղվում է Մերձավոր Արևելքում, Հյուսիսային Աֆրիկայում և Կենտրոնական Ասիայում՝ ռասայական խտրականության ենթարկվելով այս տարածաշրջանի բնակչություններին:

² FET- Female engagement teams.

Աֆղանստանի կամ Իրաքի գյուղական վայրերում: Ռազմական գործողություններում կանանց ավելի շատ ներգրավելու այս վտանգավոր նախադեպերը ոչ միայն հիմք ստեղծեցին հայրիշխանական համակարգում կանանց ռազմական գործիք դարձնելու համար, այլ նաև վերափոխում են ԿԽԱ գործընթացում վերջիններիս դերն ու նշանակությունը:

Հարինգթոնն (2011) իր հոդվածում խոսում է այն մասին, որ Բանաձևը ծառայում է որպես գործիք հետսառըպատերազմյան իրականությունում միջազգային անվտանգության նոր իրողությունների հետ առնչվելու, այլ ոչ դրանք փոխակերպելու համար: Իսկ ահա Շերի Գիբինգսի (2011) հոդվածը, որը հիմնված է ՄԱԿ-ում, ներառյալ Խաղաղության և ազատության կանանց միջազգային միությունում գենդերային հարցերի ադվոկացիայով զբաղվողներ շրջանում իրականացված ազգագրական հետազոտության վրա, ցույց է տալիս, որ Բանաձևը և դրան աջակցող խոսույթները բաց են թողել ֆեմինստական կարևոր նպատակներ: Համաձայն նրա, մինչ Բանաձևի ընդունումը ՄԱԿ-ԽԱԿՄՄ-ն կանանց ներկայացնում էին որպես խաղաղության գործակալներ (անգլ. peace agents), ինչպես նաև ունեին բացահայտ քննադատություն ռազմականացման և առնականության վերաբերյալ: Բանաձևի ընդունումից հետո արդեն փոխվեց նաև ընդհանուր խոսույթը, որը սահմանափակեց ռազմականացման, առնականության, ինչպես նաև հակամարտությունների մեջ ռազմականացված առնականության մասին քննադատությունը, փոխարենը առաջ եկավ խոսույթ, որտեղ կանայք ներկայացվում և բնորոշվում էին, որպես «կամուրջներ կառուցողներ» և «խաղաղարարներ»: Այս ամենից կարող ենք եզրակացնել, որ Բանաձևը ֆեմինստական տեսանկյունից, միջազգային անվտանգության օրակարգը փոխելու փոխարեն՝ ոչ միայն մարգինալացնում է հակամիլիտարիստական ֆեմինիզմը միջազգային խաղաղության և անվտանգության

համար ադվոկացիայի գործընթացից, այլ նաև միջազգային անվտանգության օրակարգում կանանց տալիս է ֆեմինիզմին հակասող նոր դերեր և բնորոշումներ:

Մեկ այլ հոդված, որը ևս անդրադառնում է միջազգային անվտանգության օրակարգը ձևավորող մարմնի լեգվամտածողության փոփոխությանը, Լաուրա Շեփերդին (2011) է, ով կարծում է, որ որքան էլ ԱԽ-ի լեգվամտածողության կամ բառապաշարի մեջ տեղի է ունեցել արմատական փոփոխություն, ամեն դեպքում Բանաձևը կանանց ներկայացնում է հիմնականում որպես «զոհեր», իսկ հետագայում ընդունված բանաձևերը³ կանանց ներկայացնում են որպես դերակատարներ, գործակալներ, նույնիսկ «գերհերոսներ»: Կանանց՝ որպես «գերհերոսներ» ներկայացնելը խնդրային է, քանի որ ճիշտ պատկեր չի ստեղծում կանանց՝ իշխանական համակարգերի հետ ունեցած անհավասար հարաբերությունների մասին: Նա նաև մատնանշում է, որ համակարգային պատճառները (օրինակ աղքատությունը), որոնք կարող են խոչընդոտել կանանց՝ իրենց ողջ ներուժով որպես դերակատարներ/ գործակալներ հանդես գալու հարցում ներառված չեն միջազգային կազմակերպությունների վերլուծական շրջանակում:

Գենդերը՝ բռնաճնշող համակարգերի և անձնական գործունեության

համատեքստում

Կարևորելով լեգվատմածողությունը և դրա գործածումը միջազգային փաստաթղթերում՝ պետք է նշել, որ այնպիսի արտահայտություններն, ինչպիսիք են օրինակ՝ «*Կանայք փոփոխության գործակալներ են*»⁴ ՄԱԿ-ում լայն գործածություն չեն ունեցել մինչև Բանաձևի ընդունումը: Հետազոտողները սա չեն համարում զարմանալի փաստ, քանի որ

³ Բանաձևերն են՝ UNSCR 1820 (UNSC 2008), UNSCR 1888 (UNSC 2009a), UNSCR 1889 (UNSC 2009b), UNSCR 1960 (UNSC 2010)

⁴ Անգլ.՝ women are agents of change

ԱԽ-ն ի տարբերություն Գլխավոր ասամբլեայի բաց չէ գենդերային եզրույթաբանության ինտեգրման համար, ուստի բանաձևի ընդունումը այստեղ ևս որակվում է որպես դրական քայլ:

Թեև կանանց, որպես «զոհեր» կամ «խաղաղարարներ» ընկալող էսենցիալիստական⁵ ներկայացումն (անգլ. essentialist representation) չեզոքացվել է ԿԽԱ օրակարգին առնչվող հետագա ՄԱԿ-ի բանաձևերում, այնուամենայնիվ, Բանաձևում և դրան հարակից փաստաթղթերում կանանց մասին հիմնականում օգտագործվում է կանանց գենդերին առնչվող կարծրատիպային բառապաշար: Ինտերսեկցիոնալությունը գենդերի և սոցիալական այլ կատեգորիաների ու համակարգերի (ազգություն, էթնիկ պատկանելիություն, սոցիալական դաս, կրոն, սեռականություն և այլն) միջև, որոնցում ևս կարող է տեղի ունենալ մարգինալացում, բռնաճնշում և բռնություն, բացակայում է և նույնիսկ կանխարգելվում: Սա խնդրայանցնում է այն, թե ինչպես է Բանաձևը տեսնում կանանց ներգրավվածությունը, զորեղացումը և մասնակցայնությունը անվտանգությանն ու խաղաղությանն առնչվող ոլորտներում: Սա նաև ազդում է նրա վրա, թե առհասարակ ինչպես է կանանց օրակարգն ընկալվում և կիրառվում: Գիբինգսը (2011) ներկայացնում է երկու իրաքցի կանանց այցը ՄԱԿ 2003 թվականին, որի ընթացքում նրանք դիմել են գենդերային խորհրդատուների, հասարակական կազմակերպությունների և պետությունների ներկայացուցիչների ոչ պաշտոնական խմբին: «Գենդերային հարցերի հետ կապված մտահոգություններից» խոսելու փոխարեն նրանք խոսել են ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կողմից Իրաք ներխուժման և այս իրավիճակում ՄԱԿ-ի կողմից աջակցության բացակայության մասին: Եվ չնայած այն հանգամանքին, որ Բանաձևը քաջալերում էր կանանց մասնակցությունը խաղաշինության և հակամարտությունների

⁵ Գենդերային էսենցիալիզմը այն գաղափարախոսությունն է, համաձայն որի գենդերը հստակ և բինար սոցիալական կատեգորիա է:

խաղաղ կարգավորման օրակարգերի ձևավորման գործընթացներում, այնուամենայնիվ հանդիպման ներկա Բանաձևի ջատագովները շփոթության մեջ են ընկել իրաքցի կանանց «զայրացած մեկնաբանություններից»: Այս իրադարձությունը ցույց տվեց, որ ԿԽԱ օրակարգի շուրջ կան անանցանելի պատնեշներ. որոշակի ներկայացվածության ձևեր ընդունելի են և ցանկալի, մինչդեռ այլ ձևերը չեն քաջալերվում (Gibbings 2011): Այս կապակցությամբ կարևոր է նշել, որ ՄԱԿ-ի լեզվակիրառությունը պահանջում է, որպեսզի խնդիրները ձևակերպված լինեն դրական ձևով (անգլ. positive manner) (Gibbings 2011): Եթե համեմատենք Գիբբինգսի և Շեփերդի աշխատանքները, ապա Գիբբինգսի մոտեցումը Բանաձևի արդյունավետության հարցին ավելի քիչ հուսադրող է, քանի որ ըստ այդ մոտեցման, քանի դեռ ՄԱԿ-ի լեզվակիրառումը «ուտոպիստական տեսլականների» հետ է աշխատում՝ ներկայացնելով կանանց որպես խաղարարարների, այն չի նպաստի իրական փոփոխության: Սա նաև ցույց է տալիս, որ Բանաձևի ջատագովների կողմից այնպիսի համակարգային խնդիրների անտեսումը, ինչպիսիք են համաշխարհային կապիտալիզմը, իմպերիալիզմը, նեոգաղութատիրությունը (համակարգ որի մասն, ըստ հեղինակի, կազմում են նաև ՄԱԿ ԱԽ անդամ պետությունները), կարող է մասը լինել այն տեսլականի, որ կանայք պատերազմներ կասեցնող և հակամարտություններին վերջ դնող գործակալներ են: Սա իր հերթին անհնար է դարձնում բանաձևի արդյունավետության և կիրառելիության վերաբերյալ գնահատական տալը:

Խոսելով ՄԱԿ ԱԽ-ում լեզվամտածողության, այնտեղ գենդերի ընկալման, մարզինալացման մասին՝ կարևոր է նկատել, թե ինչպես է Բանաձևը և ՄԱԿ-ն առհասարակ տեսնում ԼԳԲՏԻ+ անձանց՝ ԿԽԱ օրակարգի համատեքստում: ՄԱԿ-ը միայն վերջերս է սկսել ԼԳԲՏԻ+ իրավունքների մասին զեկուցումը, որպես ԿԽԱ օրակարգի մաս քննարկել (Hagen 2017): Այնուամենայնիվ, ԼԳԲՏԻ+ անձանց կարիքները հասցեագրելու ծրագրային

աշխատանքը մնում է ԿԽԱ օրակարգին վերաբերող նախաձեռնություններից դուրս, քանի որ ԼԳԲՏԻ+ անձինք դիտարկվում են որպես առանձին «երրորդ կատեգորիա»՝ «տղամարդկանց» կամ «կանանց» կողքին: ԼԳԲՏԻ+ անձանց համար երրորդ կատեգորիայի առանձնացումը (կարծես նրանք լինեն «տղամարդիկ» և «կանայք» խմբերից դուրս), տարբեր պատճառներով հեղինակը համարում է խնդրային, հատկապես այն պատճառով, որ ԼԳԲՏԻ+ անհատների մեծամասնությունը նույնականանում է որպես տղամարդ կամ կին: Խաղաղության և անվտանգության տարածքներում հետերոնորմատիվության գերակայությունը վտանգավոր հետևանքներ է ունենում: Գրելով Հյուսիսային Իռլանդիայի հակամարտությունում կանանց մասնակցության մասին՝ ՄակԷվոյը պնդելով «[...] երբ այն, ինչը բնական է համարվում, հետերոսեքսուալ է (և ըստ այդմ՝ նույնասեռականությունը՝ «անբնական»)»՝ առաջարկում է, որ անվտանգության վերաբերյալ ուսումնասիրություններ իրականացնող գիտնականներն ուշադրություն դարձնեն այդ փաստի վրա: Կոլումբիայիում տեղի ունեցածն այս զգուշացման կարևորությունը ներկայացնող վառ օրինակ է (մեջբերումը՝ Hagen 2017): ՄԱԿ-Կանայքի կողմից հրապարակված զեկույցում արձանագրվել է, որ.

Գենդերային նորմերի մանիպուլյացիաները և «սոցիալական զտման» (անգլ. social cleansing) գործողությունները, որոնք իրականացվել են Կոլումբիայի միացյալ ինքնապաշտպանական ուժերի (AUC) և նրա իրավահաջորդ կազմակերպությունների կողմից, հատկապես նենգ ձևերով ազդել են ԼԳԲՏԻ անձանց վրա՝ հաճախ համայնքներին մեղսակից դարձնելով նույնասեռական և ավանդական գենդերային դերերի կարծրադիպերին չհամապատասխանող անձանց դեմ ֆիզիկական և էմոցիոնալ հալածանքներին (մեջբերումը՝ Hagen 2017):

Չնայած քաղաքականություններում և վերլուծությունների մեջ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հարցի անտեսմանը, ԿԽԱ օրակարգը թույլ է տալիս համայնքային մակարդակում (անգլ. grassroot) մասնակցություն, ինչը հնարավորություն է տալիս Կոլումբիայիում ԼԲՏ ակտիվիստներին իրենց կարիքները սահմանել իրենց եզրույթներով: Կոլումբիացի ԿԽԱ ակտիվիստներն այս կապը ստեղծեցին՝ գիտակցելով գենդերային արդարության անհրաժեշտությունը նաև ԼԲՏ անձանց համար: Colombia Diversa կազմակերպության ակտիվիստները շարունակում են ճնշում գործադրել Կոլումբիայի կառավարության վրա, որպեսզի այն տեսանելի դարձնի երկրում ԼԳԲՏԻ+ անձանց նկատմամբ կիրառվող բռնությունները զինված հակամարտությունների հետևանքով:

Ապակառուցելով գենդերի և հակամարտությունների կապը

Ֆեմինիստ հետազոտողների և գիտնականների մի մասը, կարծում են, որ ֆեմինիստական պահանջը Բանաձևի նկատմամբ չպետք է սահմանափակվի միայն նրանով, որ գենդերին առնչվող հարցերը ներառված լինեն հակամարտությունների կարգավորման և դրանց վերլուծական տեքստերում: Նրանք նշում են, որ ուշադրություն պետք է դարձնել նրան, թե ինչպես է գենդերն օգտագործվում Բանաձևի խոսույթում և ինչ ենթատեքստ այն ունի: Այնպիսի ուսումնասիրությունները, որոնք պնդում են, թե, *«գենդերային անհավասարությանը բնութագրվող պետություններն ավելի հավանական է, որ բախվեն ներպետական հակամարտությունների»* կամ, *«երկրի ներսում գենդերային հավասարությունը մեղմող ազդեցություն ունի միջազգային մակարդակում պետական վարքագծի վրա»*, իրենց վերլուծությունների հիմքում ունենում են միայն գենդերային հիմնախնդիրները, մի կողմ թողնելով պատերազմի համաշխարհային կառուցվածքային պատճառները, որոնց համատեքստում գենդերային խտրական նորմերն ու պրակտիկաներ

կարող են լինել միայն պատերազմի և բռնության *ախտահիշ, այլ ոչ՝ դրա պատճառ* (Caprioli 2005): Այս մոտեցումը ֆեմինստական տեսանկյունից Բանաձևն ավելի խոցելի է դարձնում, քանի որ այն գենդերի ու դրա կապը պատերազմի, ռազմական գործողությունների և զինված հակամարտությունների հետ դիտարկում է պատճառի պրիզմայից բաց թողնելով բոլոր այն գործոնները, որոնք ազդում են գենդերի, խաղաղության և անվտանգության հարաբերությունների վրա:

Ֆարրին (2011) իր աշխատանքում ներկայացնում է, որ թեպետ պաղեստինցի կանայք կարծում են, որ 1325 բանաձևը օգտակար է կանանց ձայնը միջազգային ամբիոններում լսելի դարձնելու համար՝ նրանց անվտանգության և հզորացման տեսանկյուններից, սակայն հաշվի առնելով օկուպանտ Իսրայելի և օկուպացված Պաղեստինի միջև եղած ուժային անհամաչափությունը, նրանք վստահություն չունեն ՄԱԿ-ի, հետևաբար նաև նրա նկատմամբ, որ Բանաձևը կարող է էական փոփոխություն բերել իրենց համար և դիտարկվել որպես «արդարության հասնելու ճանապարհ» (Farr 2011):

Իրաքցի Սունդուս Աբասը, ով կանանց իրավունքների ակտիվիստ է, նշում է, որ չնայած Բանաձևը հիմք է տալիս ԿԽԱ հարցերում ակտիվ լինելու համար՝ օրինակ 25% քվոտա խորհրդարանում, այնուամենայնիվ այն փաստը, որ ՄԱԿ-ը ձախողել է Իրաքում իր առաքելության շրջանակներում բանաձևի կիրառումը թուլացած պետական ինստիտուտների պայմաններում, առաջ է բերել մի շարք չլուծված խնդիրներ բռնի հակամարտության ժամանակ, ինչպիսիք ենք՝ առևանգված և թրաֆիքինգի ենթարկված կանանց պաշտպանության հարցերը (Pratt and Richter-Devroe 2011): Անվստահության և կողմնակալության այս դեպքերը հարցեր են առաջացնում, թե ովքեր և ինչպես են մասնակցում Բանաձևի իրականացմանը:

«Երբ 1325-ը կոչ է անում հզորացնել կանանց և աջակցել, այսպես կոչված, տեղաբնիկ (անգլ. indigenous) կանանց խաղաղության ռազմավարություններին, մենք պետք է քննադատաբար հարցնենք, թե որ կանանց և որ բնիկների ռազմավարությունները»:

Նրանք մատնանշում են, թե ինչպես են որոշ կանանց խմբեր որակվում որպես «շեղված» կամ «ջղային», մինչդեռ իրենք խնդիր ունեն սեփական օրակարգը միջազգային կառույցներին համապատասխանեցնելու (Ellerby 2016): Սա իր հերթին հանգեցնում է խնդրի, թե ովքեր, ինչպես և ինչ նպատակով են ներառված Բանաձևի իրականացման գործընթացին: Այս հարցի կարևորությունը ֆեմինիստական քննադատության մեջ մեծ տեղ ունի, քանի որ, շատ ֆեմինիստներ կարծում են, որ Բանաձևի վերջնական տարբերակը ավելի շատ պաշտպանության և հզորացման մասին է: Բանաձևը չի անդրադառնում այն քաղաքականությանը, որ շատ կանանց սպառնում են և զրկում են իշխանությունից, քանի որ «քաղաքականացված» լինելու պատճառով առնականության, միլիտարիզմի ու սպառազինության խոսույթների դուրս մղումը օրակարգից համարվում է պրագմատիկ որոշում: Սրա պատճառը ըստ հոդվածի հեղինակի ՄԱԿ-ի դիրքորոշումն է, ՄԱԿ ԱԽ-ում որոշումների կայացման բնույթը և ՄԱԿ-ում Բանաձևի ընդունման ժամանակ հասարակական կազմակերպությունների թույլ դիրքը:

Մասնակցության խնդիրը կարևորներից է նաև այն պատճառով, որ միայն կանանց խաղաղությանն ուղղված գործողություններում ներգավելը դեռ չի նշանակում, որ նրանք գործում են ի շահ կանանց, պատերազմից տուժած կանանց կարիքների և կյանքի որակի բարելավմանն ուղղված օրակարգով: Էլ Սալվադորի դեպքը, որը հաճախ համարվում է խաղաղության հաջողված գործընթացի օրինակ, հակասում է ՄԱԿ-ի նախկին Գլխավոր քարտուղար Պան Գի Մունի այն պնդմանը, որ կանանց ներգրավվածությունը

խաղաղությանն ուղղված գործընթացներում արագացնում է այն, ինչպես նաև որակապես դրական է ազդում գործընթացի վրա: Էլ Սալվադորում հաջողության գրավական համարվեց այն, որ ներգրավված կողմերը՝ կառավարությունը և ապստամբները երկուստեք հարգել են զինադադարի և զինաթափման մասին համաձայնությունը: Այս գործընթացում կանանց օրակարգը ներկայացնող կանանց ներգրավվածությունը շատ ավելի քիչ է եղել: Կանանցից մեկը, ով մասնակցել է գործընթացին Էլ սալվադորյան ապստամբության շարժման կողմից հետազոտողներին ասել է, որ ինքն աջակցում է կանանց հիմնախնդիրներին, բայց դրանք բանակցությունների սեղան չի բերել: Մեկ այլ կին հրամանատար էլ նշում է, որ իր կարծիքով կանանց շարժումը «ծայրահեղական և արմատական» է և մաս չի կազմում իրենց շարժմանը (Ellerby 2016): Կանանց՝ այս գործընթացում ներկայացված լինելու և մասնակցելու համար, ինչպես արդեն նշվել է, կան խանգարող հանգամանքներ, որոնց Բանաձևը չի անդրադառնում: Սրա հիմնական պատճառն այն է, որ այն իրեն զերծ է պահում քաղաքական, ապագազուրափողական և հակակապիտալիստական օրակարգում դիրքավորելուց, չնայած նրան, որ այս հիմնախնդրային թեմաների դուրս մղումն *ինքնին քաղաքական դիրքորոշում է*:

Բանաձևի ընդունումից հետո տարբեր միջազգային, հասարակական, պետական և այլ կառույցներ սկսել են աշխատել իրենց երկրներում նրա կիրառելիության և իրականացման վրա: Բանաձևը շատ երկրներում վերածվել է գործողությունների ազգային ծրագրի, չափորոշիչների, ստացել այլ ձևեր ևս: Այնուամենայնիվ, այն տարբեր արդյունքներ է ունեցել տարբեր երկրներում, ինչպիսիք են Իրաքը, Պաղեստինը և Նեպալը:

Ինչպես արդեն նշվել է վերևում, Բանաձևը խնդրային է տարբեր խմբերի մարգինալացնելու պատճառով, և այդ խմբերից մեկը այրիներն են: Այրիները համարվում են ամենաանտեսված խումբը մարդու իրավունքների և գենդերային հարցերի խոսույթում:

Շատերի կողմից ենթադրվում է, որ դրա պատճառ կարող է լինել ՄԱԿ-ի, կառավարությունների և անգամ կանանց հիմնախնդիրներով զբաղվող մի շարք կառույցների ցանկությունը կանանց ներկայացնելու որպես մեկ միանման խումբ: Շատ քիչ երկրներ կան, որ փորձել են տեղեկատվական բազա հավաքել այրիների կարիքների վերաբերյալ՝ ինչպիսին է նրանց տնտեսական, առողջական և կրթական կարգավիճակը, ինչպիսի մեթոդներ նրանք ունեն «ճգնաժամային» իրավիճակները հաղթահարելու համար, ինչպիսի ազդեցություն ունի հակամարտությունը նրանց երեխաների վրա, արդյոք սեփականության իրավունքի և արդարադատության իրացման հետ կապված խնդիրներ ունեն, թե՛ ոչ: Հարկ է նշել, որ վերոնշյալ խնդիրները միայն կանանց մի շերտին վերաբերող հարցեր չեն, սրանք խնդիրներ են, որոնք պետք է պետության մշտական ուշադրության և հոգածության տակ լինեն, ինչը շատ պետություններ չեն անում: Նեպալի 2011-2016 թվականների ԳԱԾ-ը առաջինն էր, որ հղում էր կատարում իր երկրում ապրող բազմաթիվ այրիների կարգավիճակին և կարիքներին: Նեպալի իշխանությունները առաջինն էին, որոնք իրենց ուշադրությունը կենտրոնացրին իրենց երկրում ապրող՝ պատերազմի հետևանքով այրիացած կանանց կարիքների և իրավունքների վրա: Նրանք խորհրդակցության են հրավիրել երկրում այրիների հիմնախնդիրներով և հարցրերով զբաղվող՝ Կանայք հանուն մարդու իրավունքների և Միայնակ կանանց խումբ (այսուհետ՝ ԿՀՄԻ և ՄԿԽ) ՀԿ-ներին՝ մասնակցելու գործողությունների ազգային ծրագրի մշակման աշխատանքներին: ԿՀՄԻ-ն ու ՄԿԽ-ն քարտեզագրել և պրոֆիլավորել են պատերազմի հետևանքով 44,000 այրիների Նեպալի համարյա ողջ տարածքում: Նրանք կանանց են վերապատրաստել, որպեսզի վերջիններս իրենց բնակավայրերում կարողանան հարցազրույցներ անել և հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը: Համաձայն նրանց տվյալների, Նեպալում երկար տարիներ ձգվող հակամարտությունը պատճառ է դարձել, որպեսզի երկրում 30 տարեկանից ցածր այրիների թիվը գնալով շատ անա: Նրանց

հետազոտությունը ցույց է տվել, որ այրիներն ունեն «գոյատևման պլան»՝ դուրս բերել երեխաներին դպրոցական կրթական համակարգերից հիմնականում երկու տարածված պատճառներով. դրանիցի մեկը կրթական ծրագրերի թանկությունն է, մյուսը՝ անհրաժեշտությունը, որպեսզի երեխաներն աշխատեն և օգնել նրանց հոգ տանել այլոց մասին: Այրիների՝ հատկապես աղքիկ երեխաներն ավելի մեծ ռիսկային գոտում են գտնվում, երբ դուրս են մնում կրթական ֆորմալ հաստատություններից, նրանց կարող են վաղաժամ ամուսնացնել կամ էլ թրաֆիքինգի ենթարկել, քանի որ աղքատ դասակարգից են (Owen 2011): Պատերազմի հետևանքով այրիացած կանանց կարիքների գնահատումը կարևոր է, քանի որ պատերազմն ինքնին փոխում է բնակչության ժողովրդագրական պատկերը, ուստի կարևոր է հասկանալ դրա ազդեցությունը բնակչության ընդհանուր թվի վրա: Բացի այդ, պետության համար սոցիալական աջակցության ծրագրերի արդյունավետ կազմակերպման և իրականացման համար պատերազմից տուժած բոլոր խմբերի քարտեզագրումը կարևոր է ներկայացուցչական և արդյունավետ գործունեության համար: Խաղաղության համաձայնագրերը, որոնք չեն անդրադառնում այս խմբին և նրա ենթախմբերին նաև չեն բերում խաղաղություն և անվտանգություն վերջիններիս համար, ուստի պետությունները պետք է պարտավորվեն հանձն առնել այս խմբերի կարիքների մասին հոգալու գործը, իսկ ԿԽԱ-ին վերաբերող միջազգային փաստաթղթերը պետք է ներառեն այս խմբերին իրենց տեսլականներում և խոսույթում առհասարակ:

Այսպիսով, հակամարտությունների գոտիներում աշխատող հասարակական կազմակերպությունները, միջազգային կառույցները և հետազոտողները կարևորում են Բանաձևի ընդունումը՝ համարելով այն դրական քայլ կանանց հասարակական և քաղաքական կյանքում ներգրավվածության ապահովման գործում: Դրա հետ մեկտեղ, նրանք նաև տեսնում են, որ Բանաձևը իր խոսույթում փոփոխությունների կարիք ունի, ինչը

կարող է դրականորեն ազդել Բանաձևի արդյունավետության, կիրառելիության, ինչպես նաև նպատակային օգտագործման վրա: Ինչպես նաև հեգեմոն պետություն հանդիսացող և կանանց իրավունքների հարցերում իրենց «առաջամարտիկ» համարող պետությունների ներգրավվածությունը այս օրակարգում շատ ֆեմինիստների համար անվստահության հիմքեր է ստեղծում: Քանի որ Բանաձևն իր օրակարգով անցում է կատարում կանանց համար միջազգային օրակարգում նոր փուլի, չփոփոխելով եղած օրակարգերն ու խոսույթը՝ այն ավելի է խորացնում սոցիալական տարբեր խմբերում գտնվող կանանց ներառականության և տեսանելիության հարցը:

Եզրակացություն

Ամփոփելով ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի վերաբերյալ ֆեմինիստական գրականության վերլուծությունը կարող ենք ասել, որ ֆեմինիստ գիտնականներն ու ակտիվիստները տարբեր և երբեմն էլ իրար հակասող վերլուծություններ են անում Բանաձևի վերաբերյալ: Մի մասը պնդում է, որ այն հնարավորություն է տվել կանանց իրավունքներով և հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպություններին ներգրավվելու ԿԽԱ գործընթացում և դրա ադվոկացիայում. այն կանանց տվեց իրավական հիմքեր՝ հակամարտությունների ընթացքում իրենց ունեցած խնդիրները հաշվի առնելով կազմելու ԳԱԾ-եր: Միաժամանակ, Բանաձևի խոսույթը, ներառականությունը և կիրառելիությունը արժանացան քննադատության տարբեր երկրների ֆեմինիստական համայնքների կողմից, հետևյալ պատճառներով.

- Բանաձևը պատերազմներից տուժած մի շարք խմբերի անտեսում է: Հատկապես անտեսվում են քվիր անձիք, աղքատության մեջ ապրող կանայք, մասնավորապես այրիները և նրանց երեխաները:

- Այն անտեսում է ռազմական գործողությունների, հակամարտությունների և հետպատերազմական իրավիճակների վրա համաշխարհային նշանակություն ունեցող իրողություններ, որոնցից է կապիտալիզմի գաղափարական, տնտեսական և քաղաքական ազդեցությունները:
- Փոխարենը «ահաբեկչության դեմ պատերազմում» նախատեսվում է ավելի շատ կանանց ներգրավել, որպեսզի նրանք ծառայեն աշխարհին ավելի «ժողովրդավար և քաղաքակիրթ» դարձնելու գաղութատիրական նպատակին:

Կիրառելիության հարցը ուսումնասիրելիս պարզ է դառնում նաև, որ ՄԱԿ-ը որպես Բանաձևը ընդունած մարմին, ունի իր համար ընդունելի միայն մեկ լեզվամտածողություն, և դրանից դուրս արտահայտված մտքերը նրա կողմից ընդունելի և ընկալելի չեն: Սրա վրա մեծ ազդեցություն ունի այն փաստը, թե ինչպես է Սառը պատերազմի ժամանակ և Խորհրդային Միության փլուզումից հետո օգտագործվել կանանց օրակարգը և կանանց խնդիրները: Այստեղ կարևոր է նաև, թե ինչ դեր են ստացել կանայք «ահաբեկչության դեմ պատերազմում», քանի որ այն լիովին փոխել է խաղաղության, անվտանգության պատկերացումները, հատկապես՝ Մերձավոր Արևելքի երկրների համար: Իրաքի կանանց 2003 թվականին ՄԱԿ-ում տեղի ունեցած դեպքը սրա վառ օրինակն է: Այս կանայք, հիմք ընդունելով Բանաձևը որպես ուղեցույց որոշումների կայացման մեջ կանանց մասնակցությունը քաջալերելու և այլ ոլորտներում հզորացման համար, բարձրացնում էին այն հարցը, որ ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմական ուժերի կողմից Իրաք ներխուժելուց հետո ՄԱԿ-ը չի կիրառել Բանաձևը իրաքցի կանանց աջակցելու համար, փոխարենը նրանք ՄԱԿ-ի ներկայացուցիչների կողմից պիտակավորվեցին որպես «զայրացած»: Պաղեստինի օրինակով տեսնում ենք, որ երկար ժամանակ հակամարտության մեջ գտնվող աղքատ պետությունների կանայք վստահության խնդիր ունեն ոչ միայն Բանաձևի, այլ նաև ՄԱԿ-ի նկատմամբ, ինչն էլ խանգարում է պատկերացնել Բանաձևի հստակ

կիրառելիությունը և արդյունավետությունը իրենց համայնքի համար: Նրանց բարձրացրած հարցերը այս ամենի հետ կապված ցույց են տալիս, որ Բանաձևի բացերը խոչընդոտում են վերջինիս համընդհանուր օգտագործմանը, քանի որ կարևոր հանգամանքներ ինչպիսիք են՝ ազգությունը, էթնիկ պատկանելիությունը, սոցիալական դասը, գենդերային ինքնությունը, կողմնորոշումը, կրոնը, հետսառըպատերազմյան համաշխարհային կառավարման մոդելը և կապիտալիզմի ազդեցությունը հաշվի առնված չեն: Եվ թեպետ, Անվտանգության խորհրդի բառապաշարում Բանաձևը դրական փոփոխություն է բերում, ամեն դեպքում թերևս հենց այս պատճառներով էլ ՄԱԿ-ի լեզվամտածողությունը որակվում է որպես «ուտոպիստական տեսլական»-ների հետ աշխատանք կատարող:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ չնայած՝ Բանաձևը դրական փոփոխության սկիզբ է, Բանաձևի կիրառությունն ու արդյունավետությունը, ինչպես նաև ներառականությունն աշխարհի տարբեր մասերում կանանց գործունեությանն առնչվող հարցերում որպես մեկ ընդհանուր մոդել՝ ունի բացեր:

Գրականության ցանկ

- Caprioli, M. 2005. "Primed for Violence: The Role of Gender Inequality in Predicting Internal Conflict." *International Studies Quarterly* 49 (2): 161–78.
- Ellerby, Kara. 2016. "A Seat at the Table Is Not Enough: Understanding Women's Substantive Representation in Peace Processes." *Peacebuilding* 4 (2): 136–50.
<https://doi.org/10.1080/21647259.2016.1192240>.
- Farr, Vanessa. 2011. "UNSCR 1325 and Women's Peace Activism in the Occupied Palestinian Territory." *International Feminist Journal of Politics* 13 (4): 539–56.
<https://doi.org/10.1080/14616742.2011.611661>.
- Gibbins, Sheri Lynn. 2011. "No Angry Women at the United Nations: Political Dreams and the Cultural Politics of United Nations Security Council Resolution 1325." *International Feminist Journal of Politics* 13 (4): 522–38. <https://doi.org/10.1080/14616742.2011.611660>.
- Hagen, Jamie J. 2017. "Queering Women, Peace and Security in Colombia." *Critical Studies on Security* 5 (1): 125.
- Harrington, Carol. 2011. "Resolution 1325 and Post-Cold War Feminist Politics." *International Feminist Journal of Politics* 13 (4): 557–75.
<https://politicalscience.ceu.edu/sites/politicalscience.ceu.hu/files/attachment/basicpage/62/03-harrington-resolution-1325-and-post-cold-war-feminist-politics-paper1.pdf>.
- Owen, Margaret. 2011. "Widowhood Issues in the Context of United Nations Security Council Resolution 1325." *International Feminist Journal of Politics* 13 (4): 616–22.
<https://doi.org/10.1080/14616742.2011.611667>.
- Pratt, Nicola. 2013. "Weaponising Feminism for the 'War on Terror', versus Employing Strategic Silence." *Critical Studies on Terrorism* 6 (2): 327–31.
<https://doi.org/10.1080/17539153.2013.809267>.
- Pratt, Nicola, and Sophie Richter-Devroe. 2011. "Critically Examining UNSCR 1325 on Women, Peace and Security." *International Feminist Journal of Politics* 13 (4): 489–503.
http://www.peacewomen.org/assets/file/pratt_richter-devroe_-_critically_examining_unscr_1325_on_women_peace_and_security.pdf.
- United Nations. 2002. "Women, Peace and Security: Study Submitted by the Secretary-General Pursuant to Security Council Resolution 1325." United Nations Publication.
<https://www.un.org/womenwatch/daw/public/eWPS.pdf>

«ԿԱՆԱՅՔ, ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ և ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ» ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԲԱՅԵՐ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հեղինակ՝ Լուսինե Քոսակյան

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 թթ. և 2022-24 թթ. ՀՀ գործողությունների ազգային ծրագրի հիմքում ընկած արժեքները (առաջնահերթություններ ու վերջնարդյունքներ)

ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի իրավական պարտադիր սկզբունքը, պարտավորեցնում է անդամ պետություններին բանաձևի տեղայնացման համար ստեղծել իրավական հիմքեր՝ ի դեմս գործողությունների ազգային ծրագրերի (այսուհետ՝ ԳԱԾ): Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 197-Լ որոշմամբ հաստատել է բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2019-2021 թվականների ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը: Ինչպես նշվում է ԳԱԾ փաստաթղթում, Հայաստանի ազգային ծրագիրը բանաձևի դրույթները տեղայնացնելու շնորհիվ ուշադրության կենտրոնում է պահում սահմանամերձ համայնքներում կանանց տնտեսական և սոցիալական զարգացման խնդիրները, տեղահանված կանանց և աղքիկների հատուկ պաշտպանվածության ապահովման հարցերը:⁶

2022 թվականի հուլիսի 2-ին ՀՀ Կառավարությունը N 803-Լ որոշմամբ՝ հաստատեց ՄԱԿ-ի անվտանգության խորհրդի «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» N 1325 բանաձևի դրույթների իրականացման գործողությունների 2022-2024 թվականների ազգային ծրագիրը: Ինչպես նշված է որոշման մեջ, վերջինս, հաշվի առնելով նախորդի արդյունքներն ու քաղաժ

⁶ Տե՛ս <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=128902>

դասերը, առաջարկում է նոր համապարփակ մոտեցումներ և լուծումներ անվտանգային մի շարք խնդիրների շուրջ: Նոր ծրագիրն անդրադառնում է Արցախյան երկրորդ պատերազմի արդյունքում Հայաստանի սահմանամերձ շրջանների և Արցախի կանանց առջև ծառացած խնդիրներին ու մարտահրավերներին:⁷

Ազգային ծրագրերի առաջնահերթությունների ու վերջնարդյունքների վերաբերյալ հարցազրույց ենք ունեցել ինչպես հիմնական պատասխանատու գերատեսչությունների, այնպես էլ աջակից կառույցների ներկայացուցիչների հետ: Հարցազրույցներում հնարավորություն կար անդրադառնալու երկու ծրագրերին առանձին կամ ընդհանրական տարբերակներով, և հատկանշական է, որ բոլոր փորձագետներն անդրադառնում էին հիմնական ուղղություններին ընդհանրական մոտեցմամբ, և մասնավոր դեպքերում ընդգծում փոփոխությունները:

Հիմնական պատասխանատու գերատեսչության ներկայացուցիչներից մեկը խոսելով ազգային ծրագրերի ընդհանուր առանցքային ուղղությունների մասին նշում է՝

«Ազգային ծրագրերը համահունչ են ՄԱԿ 1325 բանաձևի կետերին ու թիրախում կանայք են: Ընդհանուր առմամբ խաղաղության ու անվտանգությանն են ուղղված ծրագիրը, և կանանց իրավունքների պաշտպանությանը: Երկու ազգային ծրագրերում էլ գործ ունենք կանանց իրավունքների պաշտպանության հետ, մինչդեռ տարբեր ժամանակներում առաջնահերթությունները տարբեր են, օրինակ, պատերազմով պայմանավորված առաջնահերթությունները փոխվել են՝ կանանց կարիքների գնահատում, հոգեբանական և սոցիալական աջակցությունն ու տնտեսական վերականգնում»:

Անդրադառնալով «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգին և բանաձևի տեղայնացման ընթացքին՝ մասնագետները ներկայացրեցին, որ Արտաքին գործերի նախարարության համակարգմամբ ստեղծվել է հատուկ միջգերատեսչական հանձնաժողով, որը

⁷https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=163530&fbclid=IwAR2bV7TknkocCPsHvhhjNnaCl_hKCRYJ5D_pBaIZYXs9EMsWvm5lYfe8zpY

ընդգրկում է բոլոր հիմնական դերակատար պետական և ոչ պետական կառույցների ներկայացուցիչներին: Հանձնաժողովը մշակում, քննարկում, գնահատում և զարգացնում է ազգային ծրագրերի բովանդակությունը և համակարգում գործընթացը: Ինչպես նշում է աջակից կառույցներից մեկի ներկայացուցիչը համագործակցության այս ձևաչափի մասին՝

«...իրականում որևէ գործընթաց կատարյալ լավը չեմ համարում, հիմնականում վերջում ունենում ենք քաղած դասեր, այնուամենայնիվ երկրորդ ԳԱԾ-ի պարագայում զգացվում էր, որ շարունակականություն կա: Վերջին տարիներին չեմ հիշում մեկ այլ բովանդակություն, որի շուրջ այսքան մեծ մասնակցություն լիներ տարբեր խմբերի կողմից, ինչքան հենց երկրորդ ազգային ծրագրի մշակման աշխատանքներում»:

Համեմատելով երկու ԳԱԾ մշակման գործընթացները՝ բոլորը ներկայացուցիչներն ու մասնագետները համաձայնել են, որ ի տարբերություն առաջինի երկրորդի մշակման գործընթացը ավելի մասնակցային ու «համակարգված էր», ինչը նաև երաշխավորել է առավել շատ սեփականության զգացում մշակողների կողմից: Նկարագրելով առաջին ԳԱԾ-ի բովանդակության մշակման աշխատանքները հանձնաժողովի անդամ մասնագետներից մեկը նշում է՝

«...ըստ չորս հիմնական ուղղվածությունների ունենք համապատասխան միջոցառումներ՝ կանանց ուղղված: Աշխատանքները երկու ուղղությամբ են գնացել՝ միջազգային ստանդարտներին և բանաձևին համապատասխանություն, որի շրջանակներում օգտագործել ենք միջազգային փորձը, դիցուք՝ Վրաստանի, և իհարկե, երկրի առանձնահատկությունները»:

Համակատարող աջակից կառույցի մեկ այլ ներկայացուցիչ նշում է, որ «...բնականաբար շարունակական կա դեռ տանելու, բայց միայն այն, որ բանաձևի տրամաբանությամբ են ԳԱԾ-երը գրվել, խոսում է որ հավատարիմ ենք մնացել հիմնական ուղղություններին»: Հասարակական ոլորտի մեկ այլ ֆեմինիստ փորձագետ իր անվստահությունն է հայտնում բանաձևին և վերջինիս տեղայնացմանը մատնանշելով այս հանգամանքը՝

«Երբ նայում ենք ԳԱԾ-երին, տեսնում ենք, որ մեծ տեղ է հատկացված մասնակցությանը, մասնավորապես՝ ուժային կառույցների մեջ: Պատերազմի ժամանակ, պարզ է, որ բանակում ու զինված ուժերում տղամարդիկ բավարար չեն, ավելի մեծ մարդկային ռեսուրսների կարիք կա, ու 1325-ը առիթ է լեգիտիմացնելու միլիտարիստական նկրտումները: [...] Մենք բոլորս լեգիտիմացրեցինք, ու ՄԱԿ-ը ստեղծեց այդ հարթակը, որ կանանց ֆեմինիստական կառույցները իրենց հավանությունը տան այս օրակարգին»:

Ասվածից հետևում է, որ բանաձևի օրակարգը տարածք է տալիս կողմնակի արդյունքների դրսևորման, ինչը հակասության մեջ է մտնում ֆեմինիստական ու խաղաղաշինական քննարկումների հետ: Ազգային ծրագրերի ձևաչափն ու տրամաբանությունն ամբողջությամբ չեն արձագանքում ու արձանագրում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ազգային օրակարգի էությունը, ինչը խնդրահարցույց է հատկապես ֆեմինիստական և խաղաղաշինական գործունեություն ծավալող փորձագետների համար: Այս առումով անհրաժեշտ է դիտարկել և գնահատել ծրագիրը մի քանի մակարդակներում և այն գիտակցմամբ, որ «ծրագրերը շատ ընդհանուր են, ու ինչ-որ տեղերում լրացված ու այնքան լայն է, որ անձը կարդալիս չի կարող պարկերացնել ծավալը»:

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21թթ. և 1922-

24թթ. ՀՀ գործողությունների ազգային ծրագրի նպատակների

իրականացման վերջնարդյունքները

Շարունակելով բանաձևի իրականացման կարևորության վերաբերյալ հարցազրույցը և խնդրականացնելով վերջինիս արդյունավետությունը՝ անդրադառնանք տեղայնացման հետ կապված մարտահրավերներին:

«Կանայք, խաղաղություն և անվտանգություն» գործողությունների ազգային ծրագրերը կազմված են պետության կողմից հաճախ կիրառվող ձևաչափով, որը բաղկացած է հետևյալ բաժիններից՝ նպատակ, միջոցառումներ, ցուցիչներ, ժամանակացույց, կատարող, համակատարող և

ֆինանսական աղբյուր բաժիններից: ԳԱԾ տրամաբանությունը շատ պարզ է ու կիրառելի, փաստաթուղթը թույլ է տալիս պատկերացնելու, թե որևէ նպատակի իրականացման համար ինչ գործողություններ է անհրաժեշտ կիրառել, ինչ ժամկետներում, ինչ ռեսուրսներով, ում կողմից և ում աջակցությամբ և, իհարկե, մատնանշելով չափման հիմնական կատարողականները: Նման բովանդակության հետ սովոր են աշխատել պետական և ոչ պետական ոլորտների մասնագետները՝ օգտագործելով մի շարք գործիքներ՝ ներառյալ վերլուծություններ, քարտեզագրման կմախքներ ու այլ մեխանիզմներ:

Համաձայն փոփոխությունների տեսության՝ խնդրի լուծումից մինչև վերջնական նպատակ ընկած ճանապարհին ցանկացած միավոր փոփոխական է (թիրախ խումբ, ռեսուրսներ, գործընկերներ, կապուղիներ, մեթոդներ, արդյունք և այլն)՝ հաշվի առնելով ներքին և արտաքին գործոնների ազդեցությունը, ինչը նշանակում է, որ ազգային ծրագրերը հնարավոր է և պետք է վերանայել և վերաադապտացնել իրավիճակի փոփոխությանը համահունչ:⁸ Առաջնորդվելով այս տրամաբանությամբ քննարկվող յուրաքանչյուր բաղադրիչի կառուցողական քննադատությունը նպատակ է հետապնդում ուղղորդել ազգային ծրագիրը դեպի առավել կարիքի, փաստերի և արժեքների վրա հիմնված արդյունքների:

Վերջնարդյունքների մասին քննարկումները կարող ենք տանել առնվազն երկու ուղղությամբ՝ ինչքանով են նշված գործողությունները նպաստում համապատասխան նպատակի իրագործմանը (միկրո մակարդակ), և թե ԳԱԾ-ում առկա բոլոր նպատակների լիարժեք իրականացումը որքանով է համապատասխանում Կանայք, խաղաղություն և անվտանգություն գլոբալ օրակարգի տեսլականին (մակրո մակարդակ):

Մակրո մակարդակում զրուցակիցները վերջնարդյունքը չափում էին բխելով բանաձևի հիմնասյուներից, այս տրամաբանությամբ գործընկեր կառույցներից մեկի փորձագետը նշում է՝

⁸ Տե՛ս <https://www.theoryofchange.org/what-is-theory-of-change/>

«բանաձևը կանանց նպատակային մասնակցության մասին է ոչ միայն թղթի վրա գրված, այլ իրական, այնպես որ արդյունքը, իրոք, հանգեցնի անվտանգության գործընթացներին, երկրորդ նպատակը կանանց անվտանգության ապահովման կարևորագույն երաշխիքի ապահովումն է»:

Մինչդեռ միկրո մակարդակում այս նույն վերջնարդյունքների մասին զրուցելիս փորձագետը նշում է, որ ազգային ծրագրերի վերջնակետը ևս.

«...միանշանակ կանանց դերի բարձրացումն է, բայց խնդիր եմ տեսնում, օրինակ, եթե վերցնենք մասնակցությունը, ապա ի նկատի է առնվում ուժային կառույցներում կանանց թվի մեծացումը, ինչը պարադոքսալ է, քանի որ փաստացի մենք ավելի ապահով ենք դարձնելու հակամարտությունը կանանց համար»:

Ասվածից հետևում է, որ թեպետ և՛ բանաձևը, և՛ ազգային ծրագրերը առանցքում դնում են կանանց մասնակցությունն ու անվտանգությունը, ազգային մակարդակում դրանց հասնելու ճանապարհը ինքնին հեռանում է խաղաղ ճանապարհով կոնֆլիկտների լուծման տրամաբանությունից:

Հարց է առաջանում՝ արդյոք «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի գլոբալ և լոկալ ընկալումները բավարար են ընդհանուրից մասնավոր և մասնավորից ընդհանուր անցումն առողջ և անխաթար իրականացնելու համար: Հարցի պատասխանը հուշում է խաղաղաշինության ոլորտում տարիներ շարունակ գործունեություն ծավալած փորձագետներից մեկը, որ մտաբերեց առաջին քննարկումները այդ բանաձևի շուրջ (խոսքը վերաբերում է նախքան 2019 թվականը), որի մասին պետական մարմինները մտահոգություն էին արտահայտում առ այն, որ այս նույն բանաձևի շուրջ քննարկումներն առհասարակ բացակայում էին Ադրբեյջանում, ինչը նաև զսպում էր Հայաստանին այս ուղղությամբ քայլեր ձեռնարկել: Այս մասին փորձագետը նշում է, որ «միջերի վրա հիմնված պատճառներ կան, թե ինչու օրակարգը նպատակային չի ծառայում», որոնց շարքում կարող ենք առանձնացնել ինֆորմացիոն բացը կամ այն, որ «լավատեղյակ չենք բանաձևի հնարավորություններից», մասնավորապես, այն որ բանաձևը հավասարապես պարտադիր է բոլոր անդամ երկրների համար և անգամ եթե ՄԱԿ-ը պատժամիջոց չի կարող կիրառել, ապա մյուս

անդամ պետությունները կարող են: Ասվածից հետևում է, որ բանաձևի տեղայնացումը յուրաքանչյուր անդամ պետության՝ որպես սուվերեն մարմնի որոշումն է, ու հակամարտության կողմերից մեկի գործողությունները չեն կարող պայմանավորվել մյուս կողմի գործողություններով կամ անգործությամբ: Միևնույն ժամանակ բանաձևը հնարավոր է օգտագործել միջազգային մակարդակում այս կամ այն պետությունում խաղաղության օրակարգի շուրջ հաշվետվողականություն պահանջելու համար:

Շարունակելով տեղայնացման վերաբերյալ գրույցը՝ փորձագետը, որ տարիներ շարունակ աշխատել է ԼՂՀ կանանց հետ նշում է, որ

«Ղարաբաղի կանայք ասում էին՝ ո՞ր էր բանաձևը, երբ պատերազմ էր, կարևոր է հիշել երկու հանգամանք այն, որ բանաձևը հնարավորություն է տալիս անգամ չճանաչված երկրներին բարձրացնելու իրենց ծայնը (պրզբն.՝ իրականացնելու հետազոտություն, կազմելու հաշվետվություն և արձանագրություն, ապա նաև ներկայացնելու ՄԱԿ ԱԽ-ին), ապա այն, որ այս բանաձևը կիրառելի է խաղաղ ժամանակներում»:

Այնուհետև փորձագետը շարունակում է միտքը՝ «Ցավոք, 1325-ը հիշում ենք միայն պատերազմի ժամանակ, այնինչ սա պետք է նախ կանխարգելող նպատակ հետապնդեր: Իսկ պատերազմի ժամանակ նոր մեխանիզմներ ստեղծելը ահնհնար է»: Ասվածից հետևում է, որ բանաձևից ակնկալիքները երբեմն թյուր են և իրարամերժ, մյուս կողմից իրական հնարավորությունները ևս բացահայտված չեն: Այս ամենը կրկին ընդգծում է, որ կարիք կա աշխատանք տանել ավելի խորքային կրթական և տեղեկացվածության բարձրացմանն ուղղությամբ:

Կարող ենք եզրակացնել, որ ոչ միայն սակավ տեղեկացվածություն ունենք միջազգային գործընթացների վերաբերյալ և թյուրընկալում բանաձևի իրականացման շուրջ, այլև խեղված ակնկալիքներ տարբեր հասցեատերերի նկատմամբ:

Ամբողջացնելով վերջնարդյունքների վերաբերյալ գրույցները՝ պետք է նշել ու արձանագրել մեկ այլ մարտահրավեր այն մասին, որ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի դերակատարներից յուրաքանչյուրը լավատեղյակ է իր համապատասխան գործառույթների

շրջանակներում իրականացվող միջոցառումներից, սակայն հաճախ չի պատկերացնում, թե նշված միջոցառումները մի կողմից՝ երկարաժամկետ կտրվածքում ինչ նպատակի/վերջնարդյունքի են ծառայում, իսկ մյուս կողմից՝ կորսված է կապը որպես մեկ ամբողջություն ազգային ծրագրի տարբեր բաժինների միջև: Հատկանշական է ընդգծել պատասխանատու գերատեսչությունների արձագանքները ազգային ծրագրերի վերջարդյունքների համատեքստում՝ «կին գինձառայողների դերի բարձրացում, կանանց կարիքների և առաջխաղացման խոչընդոտների բացահայտում և համապատասխան միջոցառումների կիրառում», «կանանց իրավունքների պաշտպանություն, պատերազմից և բռնությունից հետո վերականգնողական աշխատանքներ՝ հոգեբանական, սոցիալական, տնտեսական աջակցություն», «արտակարգ իրավիճակների արձագանքման պատրաստվածության բարձրացում, եթե կանայք պատրաստված են, ապա կարող ենք ասել, որ երեխաներն ու ընտանիքները ևս պատրաստված են»: Համադրելով պատասխանները՝ կարելի է խնդրականացնել փաստաթղթի ընդհանուր վերջնարդյունքը՝ արդյոք փոփոխությունների սլաքը ուղղված է դեպի անվտանգություն և խաղաղություն, թե դեպի պատերազմի հետևանքների հաղթահարում և պատերազմին պատրաստվածություն:

Միևնույն ժամանակ ԳԱԾ-ի համակատարող մարմիններից մեկի բովանդակային աշխատանքների նկարագրությունը փաստում է.

«Մենք այս բանաձևով առանձին աշխատանք չենք տանում, ընդհանուր առմամբ կարող են նշել, որ աշխատում ենք ու առանձնահատուկ մոտեցում ենք ցույց տալիս կանանց՝ հաշվի առնելով իրենց կարիքները: Բայց հենց անվտանգությանն ու խաղաղությանն ուղղված գործողություններ չենք անում....մենք ամեն տարի լրացնում ենք հաշվետվություն, տարեվերջին ստանում ենք համապատասխան գրություն, որտեղ պետք է ներկայացնենք, թե տվյալ ոլորտում ինչ գործողություններ ենք արել»:

Այսպես ճեղքվածք ենք նկատում մի կողմից ԳԱԾ փաստաթղթի բովանդակության և վերջինիս մեկնաբանության մեջ, և մյուս կողմից կենտրոնական իշխանության օղակի և համայնքային աշխատանքի գործնական կատարման միջև:

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 և 2022-24

թվականների ՀՀ գործողությունների ազգային ծրագրերով սահմանված

ցուցիչները

Ըստ էության «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» գործողությունների ազգային ծրագրերը սահմանում են խաղաղության և անվտանգության կերտման գործընթացում այն շրջանակները, որոնց շուրջ պետությունը պատասխանատվություններ է ստանձնել աշխատել: Ծրագրի կատարողականը հնարավոր է չափել ցուցիչների շնորհիվ, որոնք հիմնականում իրենցից ներկայացնում են քանակական կամ որակական փոփոխության չափորոշիչ: Թե որքանով են ԳԱԾ-ով սահմանված ցուցիչներն արտացոլում գործողությունների արդյունքները և օգնում հասկանալ, թե որքանով են նպատակներն իրականացվել քննարկել ենք ոլորտային ներկայացուցիչների և փորձագետների հետ:

Հիմնական դերակատար գերատեսչություններից մեկի ներկայացուցիչը առաջին ծրագրի վերաբերյալ անկեղծորեն նշեց, որ *«չափորոշիչ կոնկրետ չունենիք, որին պետք է հասնենք, ամեն ինչ նոր էր, հիմա էլ ցուցիչների փուլը լուրջ կատարելագործման կարիք ունի»*: Ի լրումն՝ փաստաթուղթը ուսումնասիրելիս երբեմն նկատում ենք, որ մեկ նպատակին հասնելու ճանապարհին ենթադրվում է մեկ գործողություն, որի համար սահմանված ցուցիչը նույնական է գործողությանը և չունի չափելիության քանակական կամ որակական տարր (նպատակ 1՝ ԳԱԾ 2022-24): Ակնհայտ է, որ Ա նպատակը իրենից պետք է ենթադրի երկարաժամկետ, բայց նաև իրատեսական փոփոխություն, իսկ գործողություններն այդ փոփոխությանը հասնելու ճանապարհին անհրաժեշտ Ա-1, Ա-2, Ա-3 քայլերը, որոնք տրամաբանորեն ավելի կարճ ժամանակահատվածում փոքր միավորներ են: Հետևաբար մեկ գործողությունը միայն բավարար չի լինի նպատակին հասնելու համար, այլապես նպատակը սխալ է սահմանված: Մյուս կողմից ցուցիչը պետք է ցույց տա, թե տվյալ Ա-1 գործողության ա-1 արդյունքը ինչով է չափվում (փոփոխություն արտահայտված թվերով, %-ով, միավոր արժեքով, իրավիճակային և այլն), նույն տարամաբանությամբ նաև Ա-2 գործողության ա-2 ցուցիչները, Ա-3 գործողության ա-3 ցուցիչները, որից հետո հնարավոր կլինի

համադրելով ա-1, ա-2 և ա-3 ցուցիչները հասկանալ արդյոք նախնական Ա նպատակը ինչ ծավալով է իրականացվել:

Աշխատանքային գործընթացքում ներգրավված գործընկեր կառույցի ներկայացուցիչը նշում է.

«Ցուցիչներն ու վերջնարդյունքները պետք է այնքան որոշակի լինեն, որ հնարավոր լինի ավարտին չափել գնահատել, որպեսզի կարողանանք նաև ապահովել աշխատանքի շարունակականություն ու անընդհատականություն: Չափելիության ու որոշակիության առումով ԳԱԾ-ը բացեր ունի: Այն մոդելն ու առաջնահերթությունը, որի հիման վրա կառուցվել են ԳԱԾ-երի ցուցիչները քանակականն է, ինչը ժամանակավոր կարգավորում է, հստակեցնելու համար շրջանակներ, օրինակ 100 հոգի 1 անգամ վերապատրաստվել են, ուրեմն հավանականությունը որ ինֆորմացիան կմնա մեծ շրջանակում ավելի շատ է, քան եթե 10 հոգու հետ ավելի խորքային աշխատանք փարվեր: Խուսափել սրանից չէր լինի, բայց սա փուլային մոտեցում է, առանց շրջանակներ որոշելու հնարավոր չէր լինի առաջ շարժվել»:

Վստահաբար մոտեցումը պատշաճ պարզաբանված է, հստակ է ու առաջին հայացքից իրականության արձագանքն է: Սակայն հայելու մյուս կողմում տեսնում ենք այն իրականությունը, ինչի մասին կիսվում է, մեկ այլ կառույցի ներկայացուցիչ ասելով՝

«Բազային դատա չունենք, ու գնահատելու համար մենք համեմատելու ելակետ չունենք, մենք սահմանում ենք թվային ցուցիչ, բայց արդյոք դա բերեց փոփոխության թե չէ, չգիտենք: Կարևոր է բազային դատան հավաքել, որպեսզի կարողանանք պրոգրեսը գնահատել»:

Այսպիսով՝ մի կողմից գործ ունենք քանակական ցուցանիշների հետ, որոնք սակայն համեմատելու եզրեր չունենք: Նույն խնդրին անդրադառնալով մեկ այլ ոլորտային փորձագետ ցուցիչների զուգահեռ կարևորում է հետևյալը՝

«Այս պարագայում թվեր տեսնելը կարևոր կլինեն, որպեսզի կարողանայինք չափել փոփոխությունը, բայց նաև լավ կլինեն, որ հստակեցվեն ժամանակացույցը, ոչ թե դիտարկել

երեք տարի, այլ ավելի կարճ ժամկետներ: Աշխատանքը անելիս շատ կարևոր է պրակտիկ, արագ, չափելի փոփոխություններ տեսնելը»:

Ինչպես նշում է, գերատեսչություններից մեկի ներկայացուցիչը ցուցիչների արդյունավետության մասին խոսելիս «2024 թվականին, իհարկե, պիտի խոսենք, թե նպատակին հասել ենք, թե՛ չէ»: Համադրելով միտքը փորձագիտական վերլուծությունների հետ՝ ակնհայտ է, որ տվյալ իրավիճակում ցուցիչները չեն օգնի իրականում ԳԱԾ-ի գնահատման աշխատանքներն իրականացնելիս: Փորձագետներից մեկը նշում է՝

«Կարող էի ասել, որ իդեալական տարբերակում պետք կլինի շարացնել ցուցիչները և այլն, բայց իրավասական չէ: Երբ քննարկում էինք, տեսնում էինք, որ շատերը նոր նպատակներ էին առաջ քաշում, բայց գուցե պետք չէր այդքան ընդլայնվել, ավելի հեշտ կլինեք նեղ պահել շրջանակը ու նպատակները փոքրացնել:.... Ազգային ծրագրերի մշակման երկու պրակտիկա կա՝ 4 հիմնական ուղղությունների հիման վրա, կամ առաջնորդվել սեփական առաջնահերթություններով, ինչպես օրինակ Մեծ Բրիտանիան, որն ինքն է սահմանել իր ոլորտային շրջանակը, ինչը տեղային ու ավելի արդյունավետ լուծում է ենթադրում»:

Զրույցի եզրակացությունն այն էր, որ «կարիք չկա քանդել, նորը շինել», բայց սա նշանակում է նաև որ կարիք չկա արհեստական լրացնել տողերը, օրինակ «եթե մասնակցությունը այլ ուղղությամբ է գնացել, ապա գուցե պետք չի դրա վրա շեշտադրել», այլ արժե սահմանել առաջնահերթություններ, որոնք տեղին են ու անհրաժեշտ օրակարգի իրականացման համար:

Աջակից կառույցներից մեկի ներկայացուցիչը նաև հաստատում է, որ. «Վերջնարդյունքները պետք է լինեն չափելի, հակառակ դեպքում հեշտ է ասել՝ հասել ենք արդյունքի: Աշխատանքային պրոցեսում գուցե մեզ թվա, թե բավարար արդյունք ունեցել ենք, բայց իրականում համապատասխանություն չլինի բանաձևի հետ: Քանի որ տեքստը լայն է գրված, այն չափելի չի դարձնում աշխատանքը ու դժվարացնում է գնահատել իրական վերջնարդյունքը»:

Քանի որ ԳԱԾ-ի շրջանակներում առաջ քաշված թեմաները միջառարկայական են, և բովանդակային առնչություն ունեն հարակից այլ քաղաքականությունների, ռազմավարությունների կամ իրավական հենանիշերի հետ, իրավացիորեն կարող ենք եզրակացնել, որ հնարավոր է նույն նպատակի գամ գործողության կրկնություն միաժամանակ մեկից ավելի փաստաթղթերում: Այս թեմայի վերաբերյալ իրենց փորձով ու տեսակետով կիսվել են գործընկերներ կառույցի ներկայացուցիչները նշելով.

«[...] իրականում ինչքան եզակի լինի գործողությունը, այնքան քիչ կլինի դուբլիկացիայի հնարավորությունը: Պրակտիկան այնպիսին է, որ որևէ գործողության մասին հիշում են միայն հաշվետվության ժամանակ, ու սրիսված են նայելու, թե որտեղ են նմանադիպ այլ գործողություն արել, և բերում ներառում են այս մի ԳԱԾ-ի հաշվետվության մեջ»:

Ակնհայտ է դառնում, որ համընկնումները այս համատեքստում ոչ թե հավելյալ կարևորություն ու լիցք են տրամադրում գործողությանը, այլ հնարավորություն մանևրելու կամ թերակատարելու աշխատանքը:

Պետք է նշել, որ առաջին ազգային ծրագրի գնահատման աշխատանքների շուրջ իրական պատկերը չկարողացանք ստանալ, քանի որ թե՛ պետական, թե՛ ոչ պետական կառույցների ներկայացուցիչները չունեին ամբողջական տեղեկատվություն մշտադիտարկման և գնահատման աշխատանքների գործընթացի և արդյունքների վերաբերյալ: Արձանագրենք, որ երկու փաստաթղթերն էլ սահմանում են մշտադիտարկման և գնահատման աշխատանքներ, այնուամենայնիվ հստակ չէ ո՛չ աշխատանքային թիմը, ո՛չ գործնական մեթոդները կամ հաշվետվողականության մեխանիզմները:

Հաշվի առնելով ասվածը՝ չենք կարող շրջանցել ազգային ծրագրի մշակման աշխատանքների ադմինիստրատիվ, տեխնիկական և մեթոդական հագեցվածության բացը: Նույնքան կարևոր է նաև ռեսուրսների ներգրավումը, այս պարագայում խոսքը մարդկային և ինտելեկտուալ ռեսուրսների մասին է: Ակնհայտ է, որ ի թիվս այլ կարիքների «Կանայք, խաղաղություն և անվտանգություն»

օրակարգի ոչ միայն իրականացման, այլև նախագծման, մշակման, լրամշակման, գնահատման և այլ լոգիստիկ աշխատանքների համար անհրաժեշտ է հատկացնել հավելյալ ռեսուրսներ:

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի դրույթների իրականացման 2019-21 և 2022-24

թվականների ՀՀ գործողությունների ազգային ծրագրերը

գենդերազգայունությունը

Այս բաժնի առաջին փուլը թերևս ամփոփենք քննարկելով և արձանագրելով ազգային ծրագրերի գենդերազգայունության մասին քննադատությամբ: Գենդերազգայուն մոտեցումը, ինչպես արդեն նշվել է «քաղաքականության ձև» է, և այն հնարավոր է չափել մի քանի մակարդակներում և մի շարք տեսանկյուններից: Ազգային ծրագրի գենդերազգայունության հարցը քննարկվել է միջգերատեսչական հանձնաժողովի անդամ ներկայացուցիչների հետ: Գերատեսչության ներկայացուցիչներից մեկն ընդգծում է հետևյալը՝ «երկու ծրագրերն էլ միտված են կանանց, ու ըստ այդմ էլ գենդերազգայուն են»: Մեկ այլ ներկայացուցիչ մասնավորեցնում է՝ «ներդրվող բոլոր գործողությունների պլանավորման մեջ, այդ թվում աղեկների հաղթահարման ու մեղմման համար, որոշվել է համագործակցային տարբերակով ներդնել գենդերազգայուն մոտեցում: Կանայք մասնակցում են այս տեսակ բովանդակությամբ ծրագրերի կազմման պրոցեսում»: Շարունակելով զրույցը նշվում է նաև, որ որոշ հաստատություններում կանայք այսպես, թե այնպես մեծամասնություն են, օրինակ՝ դպրոցներում կամ հիվանդանոցներում, այլ հաստատություններում պարտադիր պահանջ կա կանանց ներառելու բոլոր գործընթացներում: Շարունակելով թեման՝ հիմնական դերակատար գերատեսչություններից մեկի ներկայացուցիչը համեմատության կարգով նշում է՝ «Նոր ծրագիրը. կարծում եմ, ավելի գենդերազգայուն է, [...] նախորդը կարծում եմ ևս տարանջատում էր տարբեր կարիքներն ու փորձառությունները»: Լրացնելով միտքը ներկայացուցիչը նաև ընդգծում է, որ կանանց և տղամարդկանց իրավունքները «օրենքով նույնական են, մինչդեռ նախկինում օրենքը սահմանում էր, թե կանայք ու տղամարդիկ ինչ պաշտոններ կարող էին ունենալ, հիմա նման տարանջատում չկա»: Չնայած, որ ընդգծվում է, որ կրթական բաղադրիչը բոլորի համար հավասար է, այնուամենայնիվ «ծառայությունում կանանց

համար առանձին պայմաններ չկան»: Ամփոփելով կարող ենք եզրակացնել, որ պետական մարմիններից ստանում ենք այն ուղերձը, որ թիրախում կանանց պահելը, կամ գործընթացներում այս կամ այն քանակով կանանց ներգրավելը բավարար է իրավիճակը գենդերազգայուն համարելու համար:

Փորձագետների հետ զրույցի արդյունքում վերլուծվեց նաև արդեն գերատեսչություններից ստացած արձագանքը, որին ի պատասխան անկախ փորձագետը նշում է՝ *«կանանց մասին շատ բան կա, բայց իրականացման մակարդակում արդյունավետ չեն»*: Կա մեկ այլ թյուր ընկալում, որ գենդերազգայունությունը բացատրվում է միայն կամ կանանց ներկայացվածությամբ կամ այլ կերպ ասած ներկա լինելով, ինչը պարտադիր չէ, որ ենթադրի նրանց բովանդակային իմաստալից մասնակցություն գործընթացներում: Փորձագետը ընդգծեց մեկ այլ օրինաչափության մասին, այն որ *«տարածված է ասել, էն որ կին եմ, ուրեմն գենդերազգայուն եմ, բայց չէ [...]»*: Փորձագետներից մյուսը քննադատության ենթարկելով փաստաթուղթը նշում է, որ այն *«գենդերազգայուն չէ, քանի որ գենդեր ասելով չպետք է դիտարկենք միայն կանանց, այլևս չենք կարող միակողմանի նայել գենդերային թեմաներին, այս բանաձևի ու օրակարգի վերաբերյալ տեղեկացվածության բաց կա [...]»*: Գործընկեր կառույցներից մեկի ներկայացուցիչը լրացնում է այս միտքը հետևյալ կերպ՝ *«բանաձևը չի կենտրոնանում միայն կանանց վրա, նաև տղամարդանց հետ է պետք աշխատանք տանել, որպեսզի նաև ապահով միջավայր ստեղծվի, քանի որ հաճախ անվտանգության ռիսկը գալիս է տղամարդկանց»*: Շարունակելով գենդերազգայունության ավելի լայն բացատրության ու ընկալման միտքը՝ փորձագետներից մեկը նշում է՝ *«հիմա տենդենցը գնում է կանանց փոխարեն գենդեր, խաղաղություն անվտանգություն ուղղությամբ, քանի որ practitioner-ները (գործնականում աշխատողները) արդեն խոսում են այն մասին, որ եթե միայն աշխատենք կանանց հետ, ապա տուն վերադառնալիս նրանք հայտնվելու են այն միջավայրում, որտեղ խնդիրները շարունակվում են»*: Ամփոփելով այս հատվածը հղում կատարենք ֆեմինիստական և խաղաղաշինական ոլորտում գործունեություն ծավալող փորձագետի խոսքին այն մասին, որ *«եթե շատ ենք կին/կանայք բառը օգտագործում, չի նշանակում, որ դրանով գենդերազգայուն ենք դարձնում բովանդակությունը»*: Ֆեմինիստ փորձագետը սուր քննադատում է բանաձևը նշելով, որ այն ամբողջությամբ «genderless

է (թարգմ՝ գենդեր չունեցող, դիցուք, գենդերային քաղաքականության տարր չպարունակող փաստաթուղթ), առանց հայրիշխանական և առնականացված համակարգը մի քիչ շարժելու նշույլի»:

Կառույցներից մեկի ներկայացուցիչը ընդգծում է՝ *«չկա միասնական կարծիք բովանդակության շուրջ, չկա վերջնական ընդհանրական ընկալում օրինակ իրավահավասարության շուրջ, թեպետ դա շատ պարզ մեկնաբանված է օրենքում, ու չպետք է քննարկել դրա կարևորությունը, սակայն մենք դեռ սա քննարկում ենք բոլոր խմբերում»*: Ակնհայտ է, որ գենդերազգայունության մասին քննարկումները դեռևս իրենց գաղափարական համաձայնությանն ու ընդհանուր հայտարարին չեն հասել այս կամ այլ բովանդակության շուրջ:

Ամբողջացնելով պատկերը նշենք, որ ինչպես ավելի վեր քննարկվել էր ֆեմինիստ մասնագետները քննադատության են ենթարկում ինքնին բանաձևը, ուստի հաշվի առնելով տեղայնացման խրթին ճանապարհը, ակնհայտ էր, որ ազգային ծրագրերը ևս իդեալական պատկեր չէին կարող ապահովել: Մի կողմից թեմայի վերաբերյալ տարբեր ու երբեմն հակասական ընկալումները, մյուս կողմից գործնական մակարդակում գենդերազգայուն գործողությունների իրականացման հետ կապված խոչընդոտները՝ պայմանավորված ենթահամակարգերի կամ միջավայրի անպատրաստվածությամբ, և ի վերջո՝ մասնագիտական ու գաղափարական փոխհամագործակցության և փոխլրացման բացը, մեզ բերում է այն իրականություն, որտեղ գենդերազգայունությունը չափվում է միայն կանանց ներկայությամբ ու թվով և կանանց մասին խոսույթը վերապատմելով: Կարիք է առաջանում շարունակաբար զարգացնելու գիտելիքներն ու հմտությունները գենդերազգայունության թեմայի շուրջ, և զինելու բոլոր մասնագետներին գործիքներով, մեխանիզմներով ու մեթոդներով գործնականում գենդերազգայուն գործողություններ մշակելու և իրականացնելու համար, և այս ամենը դարձնել որոշակի ու չափելի:

2022-24 թվականների գործողությունների ազգային երկրորդ ծրագրի

բովանդակային տրամաբանություն

Ծրագիրն ընդգրկում է երեք տարվա ժամանակահատված, որով վերահաստատում է ՀՀ պատրաստակամությունը շարունակելու աշխատանքները «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» թեմայով: Փաստաթղթի ներածությունը սահմանում է այն, որպես «*կենսունակ փաստաթուղթ... հնարավորություն ունի իրավիճակին համահունչ լինելու նպատակով, վերանայվել կամ վերախմբագրվել*»:

2022-24 թթ. երկրորդ ԳԱԾ-ը բաղկացած է մասնակցություն, պաշտպանություն, կանխարգելում, վերականգնում ու օժանդակություն 1325-ի հիմնական սյուների վրա, որին ավելացել է նոր՝ համագործակցություն առանձին ուղղությունը: Ծրագիրը նաև սահմանում է գնահատման և մշտադիտարկման նոր ռազմավարություն: Դիտարկենք նշված հինգ ուղղություններն առանձին, փորձենք վերհանել նպատակների և հիմնական դերակատարների համամասնությունն ու ընդգծենք դրանց հետագծերը:

1. Մասնակցություն

Այս ուղղությունը ներառում է 6 նպատակ, որոնք ուղղված են կանանց մասնակցայնության, ներգրավվածության կամ իրազեկվածության ապահովմանը՝ զինված ուժերի տարբեր ստորաբաժանումներում, ոստիկանության համակարգում, անվտանգային հարցերի քննարկմանը, կլիմայի փոփոխության ազդեցության մեղման և հարմարվողականության ազգային և համայնքային ծրագրերի մշակման և որոշումների կայացման գործընթացներում, սահմանամերձ համայնքներում ճգնաժամային իրավիճակները հաղթահարելու կանանց պատրաստվածությանը, պաշտպանության համակարգում կանանց դերի կարևորության իրազեկմանը:

Ինչպես նկատում ենք նշված նպատակներից առաջինը ամբողջությամբ Պաշտպանության նախարարության հիմնական պատասխանատվության տակ է, իսկ վեցերորդը կիսվում է ՊՆ և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության հետ: Երկրորդ նպատակը ՀՀ ոստիկանության և Արդարադատության նախարարության պատասխանատվության տակ են,

համապատասխանաբար երրորդը՝ Սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների, չորրորդը՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, և հինգերորդը՝ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության: Այսպիսով՝ մասնակցություն ուղղությունն ենթադրում է առնվազն յոթ գերատեսչությունների ուղղակի ներգրավվածություն, և ՀՀ պետական կառավարման այլ մարմինների և տեղական ու միջազգային հասարակական կառույցների օժանդակություն:

Նպատակների բովանդակության վերլուծության համար դիտարկենք ենթադրվող ցուցիչները՝

- 1) պաշտպանության ոլորտի քաղաքականության մշակման գործընթացներում կանանց ներգրավվածության խթանման համար մեխանիզմների ներդրում և ռազմական ուսումնական հաստատություններում կին դիմորդների թվի ավելացում, 2) ուստիկանական համակարգում կանանց թվի ավելացմանն ուղղված մասնագիտական կողմնորոշման միջոցառումներ՝ դասընթացներ, 3) համայնքներում ավագանիների կին անդամների համար անվտանգային հարցերով քննարկումների և դասընթացների թվի ավելացում և կանանց անվտանգային կարիքների գնահատման արդյունքների արտացոլում ՀՀ բոլոր ռազմավարություններում,
- 4) համապատասխան ոլորտների վերաբերյալ ազգային և համայնքային ծրագրերում կանանց մասնակցության հավասար հնարավորությունների ապահովում, 5) ուսումնական վարժություններում կանանց թվի ավելացման ապահովում (ճգնաժամային և արտակարգ իրավիճակներ), 6) իրազեկվածության բարձրացում կանայք և անվտանգություն թեմայով: Նշված ցուցիչները թույլ են տալիս ենթադրել, որ աշխատանքներ են տարվելու մի կողմից ուժային կառույցներում (զինուժ, ուստիկանություն) կանանց թվի, դերի, կարևորության բարձրացմանն ուղղված, մյուս կողմից ուղղված՝ անվտանգության իրազեկման ու կարողությունների բարձրացմանը: Այնուամենայնիվ, ցուցիչների ձևակերպումները քանակական արդյունքներից բացի (իրառելի է թվի աճի պարագայում), հնարավոր չեն դարձնում իրապես հասկանալ և գնահատել ենթադրվող փոփոխության որակական արդյունքը:

Ամփոփելով՝ ծրագրի մասնակցություն ուղղությունը միտված է հնարավորինս լայն շրջանակներին խրախուսելու ներգրավվելու անվտանգության ապահովման ուժային լուծումներում, մինչդեռ մասնակցության հավասարապես կարևոր այլ ձևաչափեր ամբողջությամբ անտեսված են, ինչպես

օրինակ, որոշումների կայացման կամ դիվանագիտական առաքելությունների գործընթացներում կանանց ներգրավվածություն և «կանայք, խաղաղություն և անվտանգություն» թեմաներով քաղաքականությունների մշակման և բանակցությունների գործընթացներում կանանց և գենդերային թեմաների իմաստավոր ներկայացվածություն ու մասնակցություն:

2. Պաշտպանություն

Այս ուղղությունը ներառում է 4 նպատակներ, որոնք ներառում են՝ հակամարտությունների ժամանակ բռնությունից տուժած կանանց և աղքիկների պաշտպանություն, կանանց և աղքիկների հատուկ պաշտպանություն պատերազմների, արտակարգ իրավիճակների և համաճարակների դեպքում, սահմանամերձ բնակավայրերում տեղաբաշխված զորամասերի զինծառայողների կանանց սոցիալական ադապտացմանը (հարմարմանը) աջակցում, արտակարգ իրավիճակներում և/կամ պատերազմի ժամանակ առաջին օգնության ցուցաբերման հմտությունների զարգացում:

Հիմնական դերակատարներ են հանդիսանում՝ ՀՀ ոստիկանությունը, Արտակարգ իրավիճակների նախարարությունը (կրկնակի՝ թիվ 8 և 10 նպատակներում), Առողջապահության նախարարությունը, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը: Ինչպես մյուս դեպքերում օժանդակություն ակնկալվում է պետական և հասարակական կառույցներից, այդ թվում՝ Արդարադատության ակադեմիա, ՏԻՄ, Կարմիր խաչ և այլն:

Ծրագրի այս հատվածում ցուցիչներին անդրադառնալիս նկատում ենք առավել մանրամասն արդյունքային չափորոշիչներ, ինչպես օրինակ յոթերորդ նպատակի համապատասխան միջոցառման համար արդյունքային ցուցիչ է հանդիսանում՝ ըստ անհրաժեշտության հետազոտական աշխատանքների իրականացում, դասընթացների կազմակերպում և իրազեկվածության բարձրացում (տուժողների իրավունքների պաշտպանության և ազդարարման մեխանիզմներ), 1 տարվա ընթացքում մոտ 100 դատավորների և դատավորների թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց և մոտ 250 դատախազի և դատախազի թեկնածուների ցուցակում ընդգրկված անձանց վերապատրաստում: Պետք է նկատել, որ պաշտպանության

ուղղությամբ նախատեսված բազմաշերտ գործողությունները ունեն առավել խոսուն ցուցիչները, որոնք մշտադիտարկման ու գնահատման տարբեր մեթոդների համադրմամբ հնարավոր կդարձնեն չափել փոփոխությունը, միտումը կամ արդյունքը:

3. Կանխարգելում

Այս ուղղությունը սահմանում է 5 նպատակ՝ 1) կանանց և աղջիկների մասնակցություն ցեղասպանությունների, մարդկության դեմ գործած հանցագործությունների և պատերազմական հանցագործությունների կանխարգելմանն ուղղված գործողություններում (նպատակ 11), 2) կանանց, անվտանգության և խաղաղության թեմաներով իրազեկվածության բարձրացում և հմտությունների զարգացում, 3) կրթական կարողությունների զարգացում, 1325 բանաձևի վերաբերյալ տեղեկատվության ներառում կրթական ծրագրերում, 4) քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչության (ԶԲԳՎ) և զինդատախազության աշխատողների իրազեկվածության բարձրացում անվտանգության ոլորտում կանանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ, 5) կիբեր անվտանգության ծրագրերում կանանց ակտիվությանն ուղղված միջոցառումների իրականացում թվային լուծումների նկատմամբ վստահության ամրապնդում: Նպատակների իրականացումը տարածվում է հետևյալ գերատեսչությունների վրա՝ Արտաքին գործերի նախարարություն (կրկնակի), Արդարադատության նախարարություն, Պաշտպանության նախարարություն (կրկնակի), Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն, ինչպես նաև հետևյալ ենթակառուցվածքների վրա՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակ, ՀՀ քննչական կոմիտե, ՀՀ գլխավոր դատախազություն, ՀՀ արդարադատության ակադեմիա: Կարևոր է ընդգծել, որ կանխարգելման ուղղությունը ներառում է տեղական և միջազգային մակարդակում շահապաշտպանության կամ ջատագովության, կրթական և իրազեկման աշխատանքներ, ինչպես նաև ներառում է թվային աշխարհը: Սակայն պետք է ընդգծել, որ արդյունքային ցուցանիշներում կորսվում է կանանց և գենդերային թեմաների շեշտադրումը, ինչպես օրինակ նպատակ 11-ը վերջնարդյունք է սահմանում՝ ուսուցողական նյութերի մշակում և տարածում, ցեղասպանության կանխարգելման թեմայով Հայաստանի կողմից միջազգային ասպարեզում կատարվող աշխատանքների վերաբերյալ ամփոփ

տեղեկատվություն, որոնցում իսպառ բացակայում է բովանդակային շեշտադրումը: Նշված ցուցիչների առկայությունը բավարար չի կարող լինել գնահատման և մշտադիտարկման աշխատանքներում եզրակացնելու կանանց և աղջիկների մասնակցությունը կամ գենդերային զգայուն բովանդակության առկայությունը:

4. Օժանդակություն և վերականգնում

Այս ուղղությունը ընդգրկում է 2 նպատակ, որոնք Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայության, և համաձայնությամբ՝ ՏԻՄ-երի ու Երևանի քաղաքապետարանի ուղղակի պաստախանատվության տակ են: Դրանք են՝ բռնի տեղահանված և տեղահանման վտանգի տակ գտնվող կանանց հոգեբանական և իրավաբանական աջակցության ցուցաբերում և Լեռնային Ղարաբաղի հակամարտության ներգործությանը, այդ թվում 2016, 2020 թվ. ուժի կիրառմանը ենթարկված բնակավայրերում գտնվող կանանց և աղջիկների սոցիալական և տնտեսական իրավունքների պաշտպանության ապահովում, ընդգրկելով նաև 1988-1992թթ. Ադրբեջանից տեղահանված և ԼՂ ապաստանած կանանց: Նշված նպատակների արդյունքային ցուցիչները ներառում են կարիքների գնահատում և ինտեգրման պլանի մշակում, ու սոցիալ-տնտեսական ծրագրերի վերանայում, միջավայրի ադապտացում և աշխատատեղերի ավելացում:

Ակնհայտ է, որ նպատակներն ուղղակի արձգանքում են հայաստանյան (հետ)պատերազմական իրականությանը, ու փորձում են մարդկային անվտանգության տեսանկյունից ապահովել կանանց համար նախատեսված օժանդակության մեխանիզմներ, այնուամենայնիվ թիրախային շրջանակը բավական նեղ է, կարիքների գնահատումը ներկայացված է որպես արդյունք, մինչդեռ այն պետք է հիմքում լիներ գործողությունների պլանի: Կարող ենք եզրակացնել, որ բավարար շեշտադրում նպատակային այս ուղղությանը հատկացված չէ:

5. Համագործակցություն

Ծրագրում առաջին անգամ հանդիպող այս ուղղությունը ներառում է 5 նպատակ, որոնք հետևյալ սահմանումներն ունեն՝ 1) 1325 ծրագրի շրջանակում բոլոր տեղական հարթակների

համագործակցության ապահովում, համապատասխան արդյունքային ցուցանիշը՝ համատեղ այցելությունների և իրականացված ծրագրերի թվի ավելացում, 2) համագործակցության ապահովում 1325 ԳԱԾ ունեցող երկրների և շահագրգիռ միջազգային կազմակերպությունների ու կանանց հարցերով զբաղվող հիմնադրամների հետ, ամապատասխան արդյունքային ցուցանիշը՝ Գիտելիքների ամրապնդում, Միջազգային հարթակներում ՀՀ դիրքի ամրապնդում, 3) Միջազգային լավագույն փորձի ուսումնասիրում և համագործակցության հաստատում՝ պաշտպանության ոլորտում կանանց մասնակցությունը խթանելու նպատակով, ընդգրկելով նաև 1988-1992թթ. Ադրբեջանից տեղահանված և ԼՂ ու ՀՀ ապաստանած կանանց, համապատասխան արդյունքային ցուցանիշը՝ ձեռք բերված գիտելիքների և ուսումնասիրությունների արդյունքում առաջարկների մշակում և ներկայացում, 4) ԼՂ իշխանությունների և հասարակական կազմակերպությունների հետ ՄԱԿ ԱԽ 1325 և հարակից բանաձևերի իրականացման ուղղությամբ համագործակցության և փորձի փոխանակման ապահովում, համապատասխան արդյունքային ցուցանիշը՝ ապահովել խորհրդակցությունների և թեմատիկ քննարկումների քանակ, 5) Համագործակցության հաստատում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի ցեղասպանությունների կանխարգելման գրասենյակի հետ համապատասխան արդյունքային ցուցանիշը՝ ներգրավում վաղ կանխարգելման, խաղաղապահ առաքելությունների, զոհերի պաշտպանության, արդարադատության և հատուցման հարցերին նվիրված միջազգային քննարկումներին: Կարևոր է ընդգծել, որ նշված հինգ նպատակներից չորսում ՀՀ արտաքին գործերի նախարարությունը հանդիսանում է միակ պատասխանու կատարող, իսկ նպատակ 22-ի պատասխանատվությունը կիսում են Պաշտպանության նախարարությունը և Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը:

Այս նպատակային ուղղությունը հատկապես կարևոր է պետական և ԲՀԿ ոլորտի համար, քանի որ ուղղակի պատուհան է բացում «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շրջանակներում տարբեր գերատեսչությունների և ենթակառուցվածքների հետ գործընկերական աշխատանքներ տանելու համար: Պետք է նշել, որ այս հատվածում արդյունքային ցուցիչների ձևակերպումները անհամեմատ ավելի լայն են, ինչը մի կողմից բարդացնում է չափելիության հետ

կապված աշխատանքները, մյուս կողմից ազատություն է տալիս բոլոր շահագրիռ կողմերին գործելու և համագործակցելու տվյալ թեմայի շրջանակներում և դրանից դուրս:

Նշված ուղղություններին հաջորդող մոնիթորինգի և գնահատման աշխատանքների նկարագիրը միայն արձանագրում է տարեկան հաշվետվությունների ներկայացման աշխատանքը, մինչդեռ անորոշ է թողնում ինչպես կատարողների, այնպես էլ աշխատանքային գործիքակազմի հատվածը:

Ընդհանուր առմամբ ծրագիրը ունի 22 նպատակ, որոնցից առավելագույն 6 նպատակ հատկացված է պաշտպանությանը, և նվազագայուն 2 նպատակ օժանդակության և վերականգմանը: Որպես հիմնական կատարող ներառված են 11 նախարարություններ, որոնցից առավելագույնս ներկայացված են Արտաքին գործերի նախարարությունը և Պաշտպանության նախարարությունը, և մեկ նպատակի սահմանում՝ Շրջակա միջավայրի, Առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի և բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունները: Համադրելով այս վիճակագրությունը արդեն իսկ նշված բովանդակային և արդյունքային բացերի հետ կարող ենք եզրակացնել, որ ծրագիրը ունի հատուկ շեշտադրումներ ուժային ու ռազմական համակարգերում կանանց թվի աճի, բայց ոչ բովանդակային ներկայացվածության, կանանց՝ որպես զոհի պաշտպանության, բայց ոչ ակտիվ քաղաքացիական քաջալերման ուղղություններում: ԱԳՆ ակտիվ ներկայացվածությունը, ներառյալ աշխատանքների համակարգման գործառույթը, նաև թույլ է տալիս ենթադրել, որ սույն ծրագիրը առավելապես ուղղված է արտքսին աշխարհին, քան ներքին լսարանին, ինչը ծրագրի տեղայնացումը ավելի խնդրահարույց է դարձնում:

Կանայք խաղաղություն և անվտանգություն ազգային ծրագիր ԲՀԿ-ների

համար

Գործողությունների ազգային ծրագիրը երկարաժամկետ կտրվածքում միտված է դրական փոփոխություններ բերել հետպատերազմական ու խաղաղաշինական գործընթացներում: Արձանագրենք, որ ՄԱԿ ԱԽ 1325-ի հանձնարարականների անցումը քաղաքականությունից դեպի գործնական կիրառում շատ սահմանափակ է: Անդամ երկրներից մի քանի տարի պահանջվեց իրենց ԳԱԾ-երը հրապարակելու համար: Այժմ բոլոր անդամ երկրներից 103 երկիր ունեն գործող ԳԱԾ, որ կազմում է 53%: Թվով 70 ԳԱԾ-եր (72%) հատուկ տեղ են հատկացնում ԲՀԿ-ներին իրականացման փուլում: 35 անդամ պետությունների ԳԱԾ-երը (36%) ներառում են իրականացման համար հատկացված բյուջե:⁹

Հետազոտության այս հատվածում կքննարկենք բանաձևի միջառարկայական մոտեցումը և համագործակցային հնարավորությունները ԲՀԿ-ների հետ, որոնք ամփոփված են ԳԱԾ շրջանակներում և դրանից դուրս: Վերհանված խնդիրները կօժանդակեն մեզ կառուցելու գործնական առաջարկներ ուղղված տարբեր դերակատարների «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգը խթանելու համար:

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի 2022-24թթ գործողությունների ազգային ծրագրի

հիմնական դերակատարները

Ինչպես նշվեց, ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի մշակման և ընդունման գործընթացում ԲՀԿ-ները ունեցել են ակտիվ մասնակցություն, այնուամենայնիվ քննադատները կարծում էին, որ աջակցող ՀԿ-ները չափից դուրս փոխգիշումների են գնացել, և վերջնական առաջարկությունները թույլ էին ու անարդյունավետ: Նրանց մեծ ակնկալիքները, հնարավոր է, դուրս էին բանաձևի հնարավորություններից, որը պետք է բավականաչափ ընդհանրական լիներ բոլոր անդամ

⁹ Տե՛ս <https://1325naps.peacewomen.org/>

երկրների կողմից աջակցություն ստանալու համար: Բանաձևի ազդեցությունը կախված է նրանից, թե որքանով են առաջարկությունները անցնում ազգային մակարդակից տեղական մակարդակ, և յուրաքանչյուր պետությանը տարածք է հատկացվում դրանք մեկնաբանելու իր մշակութային առանձնահատկությունների և գործառնական շրջանակում:¹⁰ Նախքան տեղական մակարդակում գործընկերությանը անդրադառնալը կարևոր ենք համարում այս մասին նշել, ինչը մեզ թույլ կտա պատկերը դիտարկել ավելի լայն ու ընդգրկուն տեսանկյունից:

Բանաձևի շրջանակներում գլխավոր դերակատարներին քարտեզագրելու համար ուսումնասիրել ենք երկրորդ ազգային ծրագիրը, և դուրս հանել բոլոր կատարող և համակատարող կառույցներին, որոնց ակնհայտորեն օժտված են հատուկ դերերով ու պատասխանատվությամբ: Այսպես՝ առանձնացվել են հետևյալ գերատեսչություններն ու կառույցները՝

1. ՀՀ պաշտպանության նախարարություն (5)
2. ՀՀ ոստիկանություն (2)
3. ՀՀ արդարադատության նախարարություն (2)
4. Սահմանամերձ համայնքների տեղական ինքնակառավարման մարմիններ
5. ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն (1)
6. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն (3)
7. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն (4)
8. Արդարադատության ակադեմիա (համաձայնությամբ)
9. ՀՀ առողջապահության նախարարություն (1)
10. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն (3)
11. ՀՀ արտաքին գործերի նախարարություն (6)
12. Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցչի գրասենյակ
13. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն (1)

¹⁰ Cohn, Carol, Helen Kinsella, and Sheri Gibbings. 2004. "Women, Peace and Security Resolution 1325." *International Feminist Journal of Politics* 6 (1): 130–40. <https://doi.org/10.1080/1461674032000165969>.

14. ՀՀ քննչական կոմիտե
15. ՀՀ գլխավոր դատախազություն
16. ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարություն (1)
17. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Միգրացիոն ծառայություն
18. Տեղական ինքնակառավարման մարմիններ, Երևանի քաղաքապետարան
(համաձայնությամբ)

Մարմինները թվարկված են այն հերթականությամբ, ինչպես հանդիպում ենք փաստաթղթում պատասխանատու-կատարող բաժնում, իսկ փակագծում նշված է այն թիվը, թե քանի անգամ է նույն գերատեսչությունը հանդես գալիս՝ որպես պատասխանատու-կատարող:

Այսպես, որպես պատասխանատու-կատարող ներկայացված են 11 նախարարություններ և 7 ենթաբաժիններ (գրասենյակ, կոմիտե, ակադեմիա և այլն):

Ազգային ծրագրում ընդգրկված օժանդակ-աջակից դերակատարներին վերհանելու համար ուսումնասիրել ենք փաստաթղթում առանձնացված համակատարող դերակատար մարմիններին (խուսափել ենք վերևի ցանկի հետ կրկնությունից), որոնք ներկայացված են ստորև՝

1. Մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)
2. Միջազգային կազմակերպություններ, շահագրգիռ երկրներ, հասարակական կազմակերպություններ (համաձայնությամբ)
3. Հայկական կարմիր խաչի ընկերություն (համաձայնությամբ)
4. ՄԱԿ-ի զարգացման ծրագիր (համաձայնությամբ)
5. ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (համաձայնությամբ)
6. Ազգային անվտանգության ծառայություն
7. ՀՀ քաղաքաշինության կոմիտե
8. Էկոնոմիկայի նախարարություն
9. Տեսչական մարմին

10. 1325 հանձնաժողովի անդամ բոլոր կառույցներ

11. ՀՀ շահագրգիռ գերատեսչություններ

Այսպիսով, ունենք առնվազն 10 աջակից մարմիններ (հաշվից հանենք 2-րդ կետը, որը ընդհանրական անուն է), որոնք ևս պատվիրակված են գործողություններ այս կամ այն ձևաչափով: Ներառված դերակատարների ցանկից առաջարկում ենք ուշադրություն դարձնել *համաձայնության* սկզբունքով ներկայացված մարմիններին, որոնք կարող ենք դիտարկել իրենց գործողություններում առավել անկախ:

Համադրելով այս ցանկերը, իրապես կարող ենք ասել, որ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» ԳԱԾ-ը կարողացել է քարտեզագրել իրապես բազմամասնագիտական, միջառարկայական ու տարաշերտ գործընկերական շրջանակ, որի ապացույցն է նաև միջգերատեսչական հանձնաժողովը:

Նշենք, որ հենց այս քարտեզագրման արդյունքում դուրս բերված հիմնական դերակատարների ու աջակից կառույցների հետ էլ զրույցներ ենք ունեցել, որոնց կանդիդատներն ենք նաև հետազոտության այս հատվածում:

ՄԱԿ ԱԽ N 1325 բանաձևի 2022-24թթ գործողությունների ազգային ծրագրի

հիմնական թիրախային խմբերը

Անդրադառնալով բանաձևի և ազգային ծրագրերի հիմնական հասցեատերերին և թիրախ խմբերին՝ ակնհայտ է, որ գործ ունենք առաջին հերթին կանանց հետ: Այս հատվածում կփորձենք հասկանալ, մի կողմից, թե արդյոք կանանց բոլոր խմբերն են այստեղ քննարկվում և արդյոք կանանց բոլոր կարիքներն են արձագանք գտնում այս փաստաթղթում, իսկ մյուս կողմից, թե այլ ինչ խմբեր կան, որոնք ներկայացված են կամ կարիք ունեն ներկայացված լինելու այս օրակարգի շրջանակներում: *«Թիրախ խումբը ըստ էության տարբեր կանայք են՝ տեղահանված, սահմանային, զինված ուժերում աշխատող ու նաև ընդհանուր հասարակությունը»*, - նշում է փորձագետը անդրադառնալով ԳԱԾ տեքստին: Գերատեսչությունները թիրախ խմբին անդրադառնում են

իրենց աշխատանքային պրիզմայի տեսանկյունից, մասնավորապես առանձնացնելով՝ «այս ծրագրի շրջանակներում (խմբ՝ 2022-2022թթ. ԳԱԾ) աշխատելու ենք համակարգից դուրս կանանց հետ, պլանավորել ենք հանդիպում ունենալ ավագ դպրոցի աղջիկների հետ մասնագիտական կողմնորոշման նպատակով», մեկ այլ ներկայացուցիչ նշում է՝ «առանձնացնում ենք ընտանեկան բռնության ենթարկված կանանց, որոնց աջակցության կենտրոններն են օժանդակում, գործում են ապաստարաններ, ցերեկային ծառայություններ»: Հետաքրքրական է, որ ընտանեկան բռնության ենթարկված կանանց մասին նշել են զրուցակիցներ տարբեր գերատեսչություններից և կառույցներից, բայց կարևոր է ընդգծել, որ մի կողմից պատերազմի և զինված հակամարտության, և մյուս կողմից ընտանեկան բռնության և գենդերային հիմքով բռնության միջև կապը տեսությունից դուրս գործնականում Հայաստանում շատ չուսումնասիրված և չբարձրաձայնված հիմնահարցերից է: Նշենք, որ ընտանեկան բռնության ենթարկված կանայք՝ որպես առանձին թիրախային խումբ առանձնացված չեն ազգային ծրագրերում: Ինչպես իրավահավասարության, բռնությունից ազատ լինելու, այնպես էլ խաղաղաշինության տեսանկյունից կարևոր է ուսումնասիրել և բացահայտել նմանօրինակ օրինաչափություններ և միտումներ, որպեսզի արձագանքները լինեն հասցեական և թիրախավորված:

Շարունակելով թիրախ խմբերի թեման՝ առավել նկարագրողական և հստակ պատասխան ներկայացրեց ծրագրում ներգրավված համայնքի հետ ուղղակի աշխատանք կատարող ծառայություններից մեկի բաժնի ներկայացուցիչը նշելով՝ կանանց մեջ առանձնացնում ենք՝ «բռնության ենթարկված կանանց, սեռական ուրիշության զոհեր՝ ներառյալ հակամարտությունից հետո ճանապարհին կամ այլ պայմաններում այս կամ այն բռնության ենթարկվածներ, հարկադիր մարմնավաճառությամբ զբաղվող, թրաֆիքինգի զոհեր, կանայք, որոնք ունեն օժանդակության կարիք երեխայի խնամքի կամ պաշտպանության համար (այս իրավիճակներում կանայք մշտապես վախ ունեն տղամարդկանցից, քանի որ տանը ունեցել են շարունակական բռնության փորձառություն), հաճախ թիրախ խումբ ենք դիտարկում ընտանիքներին»: Այսքան մանրամասն թիրախ խմբերը քննարկելուց և օրինակներով աշխատանքային փորձի մասին պատմելուց հետո, գենդերազգայնության մասին խոսելուց հետո մասնագետը անդրադարձավ նաև ԼԳԲՏԻ+

համայնքին, որը ևս հատուկ աջակցության կարիք է զգում: Այս դիտարկումից հետո կարևոր է նաև ընդգծել փորձագետներից մեկի վերլուծությունը առհասարակ իշխանական դինամիկայի վերաբերյալ և դրանով պայմանավորված թիրախ խմբի ընտրության հարցում.

«ՀՀ-ում այն անձինք, որոնք անվտանգությանը չեն կարողանում նպաստեն, ցածր հեղինակություն են վայելում: Բացառությամբ՝ ամենաբարձր ռեյտինգն ունի տղամարդը, քանի որ մարտիկ է, ապա երիտասարդ կինը՝ վերարտադրողական ֆունկցիա ունի, որի նշանակությունը զինվոր ծնելն է, երեխաներն ու երիտասարդները կարևոր են, քանի որ ապագա մայր են կամ զինվոր: Տարեց տղամարդն էլ, կինն էլ ռեյտինգ չունեն, միևնույն ժամանակ դուրս են մնում նաև հաշմանդամություն ունեցող անձինք, որոնք չեն կարողանում նպաստեն անվտանգությանը: Նույն տրամաբանությամբ նաև այլ խմբեր, ինչպես ՀԳՏԻ+ համայնքը, քանի որ պարզ է, որ վերարտադրողական ֆունկցիա չեն իրացնելու, չեն ծառայելու բանակում» (հեղ.՝ զրուցակիցը ներկայացնում է հասարակությունում ակտիվ շրջանառվող պատմույթը, որ ձևավորված է կարծրատիպերի և միֆերի վրա, և ամենևին չի ենթադրում, թե համապատասխանում է նշված համայնքի փորձառությանը):

Համադրելով ստացված արդյունքներն ու վերլուծությունները կարող ենք եզրակացնել, որ թիրախ խմբի ընդհանրացումը ի դեմս *կանանց*, և՛ հնարավորություն է տալիս դիտարկելու փաստաթուղթը որպես ներառական ու փոխհատվող կամ միջառարկայական (ինտերսեկցիոնալ), և՛ բացառող, քանի որ անուղղակի դիտարկում ենք կանանց որպես զոհ կամ առանձնացնում ենք կանանց միայն այն շերտը, որոնք կարող են այս կամ այն կերպ նպաստել անվտանգությանը (ոչ խաղաղությանը):

Միջառարկայականությունը ևս պետք է դիտարկել մի քանի մակարդակներում, իհարկե, փորձագետներից մեկը քննադատում է նաև այն միակողմանի մոտեցումը, որ *«առանձնացվում է սահմանաբանակ կամ տեղահանված անձանց հոգեբանական աջակցության տրամադրման կարիքը, մինչդեռ ունենք երևանաբանակ շատ որդեկորույս մայրեր, որոնք ևս օժանդակության կարիք ունեն»:* Փորձը ցույց է տալիս, որ միայն ժողովրդագրական հիմքով խմբերին բաժանելը խնդրահարույց է իրական կարիքների արձագանքման տեսանկյունից, ինչը գործընթացը դարձնում է *«արհեստական*

ու լողզված»: Հետևելով այս տրամաբանությանը՝ մեկ անգամ ևս շեշտադրում ենք կարիքների բացահայտման, գնահատման և քարտեզագրման աշխատանքների իրականացումը, և դրանց պարտադիր ներառումը ԳԱԾ մշակման և իրականացման գործընթացներում: Այլ կերպ ասած գործողությունների անհրաժեշտ արդյունքը ապահովելու համար պետք է հիմնված լինեն իրական խնդիրների և կարիքների վրա:

Շրջանը ամբողջացնելու համար համեմատենք ու համադրենք բոլոր ներգրավված մարմիններին ու խմբերին: Արդեն առանձնացրել ենք հիմնական դերակատարներին՝ ներառելով պատասխանատու-կատարող և աջակից-համակատարող կառույցներին, և հասցեատերերին՝ խոսելով թիրախ խմբերի մասին տարբեր մակարդակներում: Պետք է նշել, որ երբեմն դերակատարների ու հասցեատերերի միջև կապը անորոշ է, քանի որ որոշ նպատակներում հասցեատեր կամ թիրախ խումբ կարող ենք համարել նաև որոշ գերատեսչությունների կամ կառույցների, որոնք այլ տեղերում հիմնական դերակատարներ են: Միևնույն ժամանակ կանայք կան երկու տեղում էլ: Այս առումով կարևոր է, որ *«յուրաքանչյուր ընթերցող կարողանա իրեն գտնել այս կամ այն գործընթացներում»*: Փորձագետներից մեկը հիասթափություն է հայտնում այն մասին, որ *«երկրի համար, որ տեսել է առնվազն երկու պատերազմ, մասնագետների համար ամենաքիչը պետք է կարևոր լիներ ծանոթանալ բանաձևին, որը վերաբերում է խաղաղությանը[...]*»: Այսկերպ, մեկ անգամ ևս ընդգծում ենք այն խնդիրը, որ համապարփակ տեղեկացվածությունը բանաձևի և ազգային ծրագրերի վերաբերյալ թերի է:

Գործողությունների ազգային ծրագրերի մարտահրավերներն ու կարիքները

Հետազոտական աշխատանքի ընթացքում մեկ անգամ չէ, որ քննարկումներն ու վերլուծությունները հանգեցրել են ռեսուրսների վերաբերյալ զրույցների: Առանց բացառության բոլոր զրուցակիցները կարիք ու անհրաժեշտություն են հայտնել ներգրավելու հավելյալ ռեսուրսներ՝ մարդկային, նյութատեխնիկական, ինտելեկտուալ, ֆինանսական և այլն:

Ակնհայտ է, որ ԳԱԾ-ը անգամ հպանցիկ ուսումնասիրելիս կնկատենք, որ ֆինանսավորման համար նշված են միայն՝ *Միջազգային կազմակերպությունների ֆինանսական միջոցներ, Հասարակական կազմակերպությունների ֆինանսական միջոցներ, Օրենքով չարգելված այլ աղբյուրներ*: Այս մասին կոշտ արտահայտվել է գործընկեր կառույցներից մեկի ներկայացուցիչը նշելով, որ *«մեր պրակտիկայում չի հանդիպել որևէ ազգային պլան, որ որևէ պետական ֆինանսավորում չունենա, սա բացառիկ է այս առումով, ինչը նաև ցույց է տալիս պետական կամքը այս ԳԱԾ-ը իրապես իրագործելու վերաբերյալ»*: Գործընկերները հավատացած են, որ եթե կառավարությունը ունի ծրագիր, որի համար ռեսուրս չի սահմանում, ուրեմն և «բեռ» չի ստանձնում ու պատասխանատվություն չի վերցնում, ինչը *«կառավարության կողմից ոչ պարզաճ մոտեցում է, առաջնահերթությունները այլ են»*: Կարելի է նշել, որ պետական բյուջե չհատկացնելը նաև ծրագրի ձախողման ռիսկ է ենթադրում, ակնհայտ է, որ եթե այլ ֆինանսավորում չլինի, ապա փաստացի գործողությունները չեն կարող իրականացվել: Ֆինանսների բացակայությունը գերատեսչությունները ևս դիտարկում են որպես մարտահրավեր, ինչը սահմանափակում է գործողությունների մասշտաբայնությունը, պրոֆեսիոնալությունը և արդյունավետությունը: Գերատեսչություններից մեկի ներկայացուցիչը նշում է՝ *«կազմակերպչական հարցերը մենք պատրաստ ենք անել, բայց փորձագետների, միջազգային փորձի փոխանակման համար դոնորների և այլ գործընկերների աջակցության կարիք կունենանք, ինչի փորձ նախկինում եղել է»*: Այն հարցին, թե ինչ ռիսկեր է ենթադրում բյուջեի բացակայությունը և ինչպես կարելի է մեղմել այս հանգամանքը ներկայացուցիչը նշում է՝ *«Եթե արտաքին ֆինանսավորման հնարավորություն չլինի, ապա շատ պրակտիկ իրավիճակային լուծում է պեղք, համագործակցել ՏԻՄ-երի հետ՝ ներքին ռեսուրսներն օգտագործելով, բայց աշխատանքային բազմազանության տեսանկյունից շատ բան անել չենք կարող»*: Ասվածը գալիս է ապացուցելու արդեն իսկ առաջ քաշված մարտահրավերը առ այն, որ ֆինանսական միջոցների բացակայությունը ներքին ու արտաքին ռիսկեր են պարունակում ԳԱԾ իրականացման համար, ինչպես օրինակ մարդկային, ինտելեկտուալ, ժամանակային ռեսուրսների սակավություն, արտաքին ֆինանսավորման աղբյուրներից կախվածություն, գործողությունների շարունակականության սակավ երաշխիքներ:

Փորձելով հետահայաց գնահատել 2019-21թթ. ԳԱԾ գործողությունների արդյունքները, որոնց համար ևս պետական ֆինանսավորում հատկացված չէր, փորձագետը ավելի լայն է դիտարկել հարցը դիտարկելով նաև արտաքին այլ մարտահրավերներ, որոնք խոչընդոտել են ազգային ծրագրին.

«ԳԱԾ-ի իրականացման վրա միանշանակ ազդել է պատերազմը, դեռ դրանից առաջ էլ COVID-19 համավարակով պայմանավորված արդեն իսկ շատ գործողություններ կասեցվել էին: Բայց դեռ դրանից առաջ էլ ակնհայտ էր որ ողջ ծավալով չի կատարվելու գործողությունները, քանի որ բյուջե հատկացված չէր»:

Մեր գրուցակիցներից շատերն են անդրադարձել այս թեմային, հետաքրքրական էր գերատեսչություններից մեկի փորձառությունը համավարակի ընթացքի վերաբերյալ՝ ըստ որի «քովիդի ժամանակ գործողությունները ուղղակի սառեցվեցին [...] Սահամանափակումների պատճառով մեկ տարի գրեթե գործողություններ չեն իրականացվել հաստատություններում: Պատերազմը վերջակետ դրեց այդ ընթացքին, և ոչ ոք լուրջ չէր վերաբերվում այս փաստաթղթին: 2021 թվականին փորձեցինք ակտիվացնել աշխատանքները»: Հնարավոր չէ շրջանցել 2020թ. Լեռնային Ղարաբաղի 44-օրյա պատերազմի հետևանքների մասին քննարկումը: Պատերազմից հետո գործնական փոփոխություններից խուսափելն ակնհայտորեն անհնար էր, ինչը երևում է նոր ներդրված թեմաների մեջ, այնուամենայնիվ հանձնաժողովի մասնակիցները մատնանշում են նաև, որ «փոխվեց մոտեցումը», «պետական գերատեսչություններն ավելի բաց դարձան, մինչդեռ ՀԿ-ներն ընդհատակ գնացին, չկարողացան իրապես օգտագործել տարածքը, որը ի դեպ դեռ կա, բայց փակվում է, ու պետք է ավելի ակտիվ աշխատանք տանել»: Փորձագետներից մեկը հավատացած է և ընդգծում է նաև այն փաստը, որ «անգամ եթե չունենք ֆինանսավորում այս տարվա համար, ապա հնարավոր է լոբբիստական և ջատագովության աշխատանքների շնորհիվ պետական բյուջե հատկացնել հաջորդ տարիների համար կամ հաջորդ ազգային ծրագրերի համար»:

Կարևոր է արձանագրել նաև թիրախ խմբերի հետ ուղղակի աշխատանք կատարող բաժիններից մեկի այն փորձառությունը, որ «այլ հակամարտությունները ևս անդրադառնում են մեր ներքին

աշխատանքին (հեղ.՝ դիցուք, Ռուս-ուկրաինական պատերազմը)[...] Արցախյան պատերազմի ժամանակ կացարանների և ապաստարանների հետ կապված խնդիրները խոսում են արագ արձագանքմանը անպատրաստված լինելու մասին»։ Նույն մասնագետը շատ կարևոր մեկ այլ լրացում է անում այն մասին, որ «ըստ առաջնահերթության փորձում ենք օժանդակել բոլորին, բայց ամեն ինչ պայմանավորված է ռեսուրսների հասանելիությամբ»։

Ամփոփելով նշենք, որ կարևոր է հաշվի առնել նաև երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավիճակը և այլ առանձնահատկությունները, որպեսզի կարողանանք նաև ծրագրի մշակման և իրականացման փուլում ադապտացնենք գործողությունները։ Ինչպես արդեն վերևում նշվել էր, պատերազմների ժամանակ «ոչինչի չի աշխատում», ուստի կարևոր է նաև ունենալ մշակել արտակարգ իրավիճակների գործողությունների ծրագիր, որը իր հերթին ենթադրում է ավելի մեծ ռեսուրսներ ու ավելի ամուր համագործակցություն։

Համագործակցային հնարավորություններ ՔՀԿ-ների համար

Համագործակցության վերաբերյալ անկեղծ բովանդակային քննարկում ենք ունեցել մի քանի գերատեսչությունների ներկայացուցիչների, գործընկեր կառույցների, այլ շահագրգիռ կառույցների հետ, ինչպես նաև հենց ՔՀԿ ներկայացուցիչների ու անկախ փորձագետների հետ։ Արդյունքում քննարկվել ու բացահայտվել են ինչպես համագործակցության մարտահրավերներ, այնպես էլ հնարավորություններ, որոնք համակողմանի ներկայացնելով հնարավոր կլինի հանգել որոշ եզրակացությունների և ապա առաջարկների։

Համագործակցության հասկացությունը լավագույնս ուսումնասիրելու համար պետք է դիտարկել այն տարբեր տեսնակյուններից և տարբեր մակարդակներում։ Մասնավորապես՝ պետք է տարանջատել համագործակցության կողմերին՝ ըստ ուժի և իշխանության հավասարակշռման։ Դիցուք, տարանջատենք հավասարը հավասարի, կախյալ և անկախ բնույթի համագործակցության տեսակները։ Այս բովանդակության շուրջ քիչ թե շատ հավասարը հավասարի համագործակցություն հնարավոր է տարբեր նախարարությունների գերատեսչությունների միջև, որոնք գործառույթով

հավասարազոր մարմիններ են: Այս առումով փորձագետի կողմից առաջ քաշված մտահոգությունն այն է, որ «նա, որն ավելի շատ ռեսուրսներ ու հնարավորություններ ունի դեպի իր կողմ կքաշի պարանը (հեղ.՝ այստեղ խոսվում է ԳԱԾ բովանդակության մասին, ու ուղիղ համեմատական է տարվում թվով շատ գործողությունների և հետևաբար շատ արդյունքների, և ընդհանուր առմամբ վերջարդյունքների սլաքի միջև), ինչը նկատում ենք հիմա ուժային կառույցների կողմից»: Նույն մտքին է հակված տարիների փորձառություն ունեցող մեկ այլ ֆեմինիստ փորձագետ, որն ի լրումն ասվածին ավելացնում է «ասում են, թե կանանց կազմակերպությունները ներգրավված են եղել ծրագրերի մշակման աշխատանքներում, բայց ես փորձ չեմ ունեցել, ու կարող եմ ասել, որ փորձագիտական թիմը ու հանձնաժողովը գործընթացը արել է անկախ, ու ներկայացվել է մեզ արդեն որպես արդյունք: Կանանց հետ ուղղակի աշխատող ՀԿ-ները ներգրավված չեն եղել գործընթացում»: Ասվածից ստացած դասն այն է, որ համագործակցությունը չափենք ոչ միայն ներկայացվածությամբ, այլև որոշումների կայացման գործընթացում ազդեցության մակարդակով:

Հաշվի առնելով որոշ միջազգային կառույցների հեղինակությունը, ինչպես օրինակ ՄԱԿ գրասենյակը, ինչպես նաև առանձնահատուկ առաքելությամբ օժտված Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը (այսուհետ՝ ՄԻՊ), որոշ առումով այս համագործակցությունը ևս հնարավոր է հավասարը հավասարի դիտարկել: ՄԻՊ գրասենյակի գործընկերները անդրադառնալով համագործակցային իրենց յուրահատուկ դերին նշում են.

«ՄԻՊ-ը բաց է համագործակցության համար ինչպես պետական, այնպես էլ հասարակական կառույցների հետ: Մենք աշխատանքը կատարելիս ներգրավում ենք ՏԻՄ-երին և համայնքային դերակատարներին, ներկայացվածություն ունենք մարզերում ու այդպեղ պարողանում ենք առհասարակ համայնքներում ակտիվ աշխատել: Այս առումով կարող ենք միջնորդի դեր ստանձնել հասարակական կառույցների և պետության միջև»:

ՄԱԿ-ի բնակչության հիմադրամի գրասենյակը համագործակցությունն արդյունավետ է գնահատել նշելով՝ «մենք փոփոխված ենք եղել պրոցեսների մասին, նաև մեր կարծիքը, առաջարկները հաշվի են առնվել: Բոլոր գերատեսչությունների հետ լավ հաղորդակցում ունենք, ու համագործակցության

լավ փորձ: Մենք վստահելի գործընկեր ենք դիտարկվում, ու մեզ դիմում են փորձագիտական խորհրդակցության համար»: Կարևոր է, որ գրասենյակը ընդգծելով իր շահերի պաշտպանության և կարողությունների զարգացման գործառույթը, նշում է՝ «չեմ դիտարկում մեզ որպես դոնոր կամ ֆինանսավորող, այլ աջակցող, քանի որ բովանդակային աշխատանք ենք տանում, ու հուսով եմ պետությունը ևս այդպես է մեզ ընկալում»:

Նույն տրամաբանությամբ կարող ենք առանձնացնել կախյալ համագործակցության տարբերակ՝ օրինակ գերատեսչություն և ենթակա բաժին, կամ կենտրոնական իշխանություն և տեղական ինքնակառավարման մարմիններ (այսուհետ՝ ՏԻՄ), համագործակցության այս ձևաչափը ենթադրում է աշխատանքի պատվիրակում ու կատարում, որտեղ հաղորդակցումը հիմնականում միակողմանի է, իսկ հետադարձ կապը արտահայտվում է հաշվետվության տեսքով, որը փոփոխության առաջարկ կամ մեկնաբանությունների տարածք չի տրամադրում կախյալ կողմին: Այս առումով փորձագետներից մեկը նշում է հետևյալը՝ «եթե չկա ֆինանսավորում մեր ՏԻՄ-երը հնարավորություն չունեն իրականացնելու միջոցառումներ»: Խաղաղաշինական ոլորտի մեկ այլ ՔՀԿ ներկայացուցիչ առանձնապես մատնանշում է ՏԻՄ-երի գենդերազգայնության ցածր մակարդակը: Ինչը թույլ է տալիս մտածել, որ համայնքային մակարդակում թիրախ խմբի հետ ուղիղ աշխատանք տանող օղակների հետ առանձնահատուկ կրթական աշխատանքներ է պետք իրականացնել:

Հարաբերությունների մյուս տեսակը՝ անկախ համագործակցությունը, կարող ենք դիտարկել պետական ու ոչ պետական կառույցների միջև, մասնավորապես, ինչպես ԳԱԾ-ում անվանապես նշված առանձին միջազգային և տեղական կառույցների հետ, այնպես ընդհանուր առմամբ ՔՀԿ-ների հետ: Հենց այս համագործակցության ձևաչափը մեր հետաքրքրության կիզակետում է, ու առանձնահատուկ կմեկնաբանվի ստորև:

Արդյունավետ համագործակցության համար ելակետային ենք համարում փոխադարձ վստահության և թափանցիկ հաղորդակցման բաղադրիչները, ուստի փորձենք հասկանալ ինչպիսին է պատկերը այս առումով պետական ապարատի և ՔՀԿ սեկտորի միջև:

Հարկ է նշել, որ մեր գրուցակից գերատեսչությունների ներկայացուցիչները բոլորը նշել են որ բաց են համագործակցության համար: Պետական կառույցներից մեկի ներկայացուցիչը հաստատում է՝ *«Համակարգային փոփոխությունը միայնակ անել անհնար է, համագործակցությունը ինչպես այլ գերատեսչությունների, այնպես էլ հասարակական կազմակերպությունների հետ կարևոր է ու առաջնահերթ»:* Մինունույն ժամանակ նա ընգծում է, որ «համագործակցությունը ծրագրային ու իրավիճակային է»: Ինչպես նշում է մեկ այլ գերատեսչության ներկայացուցիչ՝ *«պետք է հասկանալ, թե ՀԿ-ներն ու նախարարությունները ինչպես կարող են օգնել միմյանց»:* Հետաքրքրական է, որ գրույցում կառույցներն անկեղծորեն հիշատակում էին, ինչպես հաջող այնպես էլ ծախողված հաղորդակցման ու համագործակցությունների մասին: Այն հարցին, թե ինչպես կարող են ՔՀԿ-ները աջակցել ԳԱԾ-ի շրջանակներում կամ դրանից դուրս, հնչել են հետևյալ պատասխանները՝ *«ՀԿ-ներն ունեն շատ լավ վերլուծություններ, միջազգային փորձ ու այլ ռեսուրսներ, կարող ենք նրանց փորձագիտական/վերապատրաստողի դերում դիտարկել»*, կարևոր է նաև, որ փորձ ունեցող ՀԿ-ներն ու անհատները *«փորձով կիսվեն»*, որի համար ընդունելի է ցանկացած ձևաչափ: Պետք է նշել, որ ԳԱԾ-ում արդեն իսկ նշված *հասարակական կազմակերպություն* անունը կարելի է հանդիպել ինչպես տարբեր նպատակների դաշտում համակատարողների, այնպես էլ ֆինանսավորման աղբյուրի դաշտում, ինչը նշանակում է, որ Կառավարությունը համաձայնում ու օժտում է ՔՀԿ կառույցներին այս գործառույթով, որը չի մասնավորեցնում, բայց նաև չի սահմանափակում գործընկերային հնարավորությունները: Գերատեսչություններից մեկը նշում է՝ *«Եթե ՀԿ-ները ցանկանան ներգարվել աշխատանքներում, բնականաբար պետությունը չի փնտրելու (խմբ.' ի նկատի է առնվում առանձին ՀԿ-ների, որոնց հետ պետք է համագործակցի) այդ ՀԿ-ներին, պետք է նախաձեռնողականությունը ՔՀԿ-ներից գա...»*, մինննույն ժամանակ ՀԿ-ների աշխատանքի մասին ներկայացուցիչը նաև նշում է, որ *«...կամավորական սկզբունքով արդեն իսկ մեծ գործ են անում, ծրագրեր են իրականացնում»:*

Պատկերը, որ ստանում ենք ոչ պետական կառույցների ներկայացուցիչների հետ գրույցում առավել բազմազան է: Գործ ունենք ՔՀԿ մի շարք խմբերի հետ, որոնք բերում են իրենց տարբեր փորձառությունները: Ինչպես վերևում նշեցինք, որոշ կառույցներ առանձնանում են իրենց

հեղինակությամբ ու նշանակությամբ, որոնք իրենց վերագրում են «կապողակի», «միջնորդի» կամ «աջակցի» դեր: Վերջիններս նշում են, որ իրենց պարագայում հաղորդակցումը սահուն է, առանց խոչընդոտների, իսկ ձայնը՝ լսելի: Մյուս կողմից ունենք տեղական ՔՀԿ ներկայացուցիչներ, որոնց փորձառությունը ևս տարբերվում է մեկը մյուսից: Ընդհանուր առմամբ կարող ենք առանձնացնել հասարակական կառույցների, որոնք տարիների փորձով, աշխատանքային ծավալով, մատուցած բացառիկ ծառայություններով կամ դերով պայմանավորված ավելի մեծ հեղինակություն են վայելում ու «սիրելի են» մի կողմից, մյուս կողմից շարքային հասարակական կառույցների, որոնք չեն առանձնանում վերոնշյալ բնութագրերով՝ ընդ որում վերջիններիս մեջ պետք է առանձնացնել նաև շահապաշտպան, կամ համայնքային մակարդակում աշխատանք կատարող կառույցների, որոնք հնարավոր է ունենան կամ չունենան պետական կառույցների հետ աշխատելու փորձառություն:

Փորձագետները անդրադառնալով պետական ու հասարակական ոլորտների միջև համագործակցությանը նշում են.

«Հնարավորությունները հավասար չեն տարբեր ՔՀԿ-ների միջև... կան ՀԿ-ներ, որ ավելի մեծ հասանելիություն ունեն՝ սիրելի ՀԿ-ներ, որոնց դեմ դժվար է մրցակցել հանուն պետական մարմինների հետ համագործակցության: Երկար տարիներ մենք քննադատել ենք, դժգոհ ենք եղել, ձեռքներս լվացել մի կողմ ենք քաշվել (հեղինակի կողմից պարզաբանում՝ զրուցակիցը մտաբերում է ՀԿ-ների այն փորձը, որով խնդիրը բարձրաձայնվում է, բայց խնդրի լուծման ուղղությամբ գործողությունները անավարտ են մնում), ու գերապեսչությունները սովորել են դրան...»:

Մեկ ուրիշ ՀԿ ներկայացուցիչ կիսվում է ԳԱԾ-ի մշակման փուլում իր անձնական փորձով՝ «կարծում եմ՝ ինչ-որ բաներ փակ դռների ետևում են որոշվել, մենք ունեցել ենք առաջարկներ, որ ուղարկել ենք, բայց չեն ընդունվել, պարճառաբանությունը լողված էին...շատ հիասթափեցնող էր»: ՔՀԿ կողմից պետական համակազմի հետ համագործակցության պատկերը արտացոլում է բացասական փորձառություն՝ թույլ տալով կրկին ընդհանրական կարծիք կազմել այն մասին, թե համագործակցությունը անպայման փակուղի կտանի, ապարդյուն կլինի ու ժամանակավրեպ:

Միջազգային կառույցներից մեկի ներկայացուցիչը հանդես է գալիս կարևոր առաջարկներով ուղղված համագործակցության ձևաչափի մասին:

«Այն բոլոր խմբերը, որոնց անդրադառնում ենք գործողությունների շրջանակներում, պետք է ներգրավված լինեն պրոցեսներում, հակառակ դեպքում արդյունք չենք տեսնի: ՔՀԿ-ն նախ պետք է հենց սկզբից մասնակցի պրոցեսներին, որպեսզի եթե շահառուներ է ներկայացնում այս խմբի ծայնը լսելի դարձնի, հետո էլ մշտադիտարկում իրականացնի: Անգամ եթե ՔՀԿ-ն չունի խումբ, որի շահապաշտպանությամբ զբաղվում է, ապա որպես չեզոք կառույց պետք է ներգրավված լինի գնահատման աշխատանքներում»:

Հետաքրքրական է, բայց ասվածին համակարծիք տեսակետներ արտահայտել են նաև պետական ու հասարակական ոլորտի ներկայացուցիչները: «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» օրակարգի շրջանակներում տարիներ շարունակ աշխատանք տարած մասնագետը նշում է, որ թեմայի վերաբերյալ «հաղորդակցությունը եղել է մարտահրավերներով լի, [...] հիմա կարևոր է հաղորդակցումը համագործակցային դարձնել՝ կիսվել սեփական մասնագիտական փորձով: Ակնհայտ է, որ գերատեսչությունները մեր կարիքը ունեն, ու այս ուղղությամբ երկխոսություն է պետք սկսել»: Թիրախ խմբի հետ ուղղակի աշխատանք կատարող պետական կառույցը նշում է՝ «Պարբերաբար նեղ մասնագիտական վերապատրաստումների կարիք է լինում, ու նաև ինֆորմացիան բաժիններում հավասարաչափ տարածելու համար դասընթացների կարիք կա, ուստի այս առումով կարևոր է ՀԿ-ների դերը»: Նշվածը բավարար է եզրակացնելու համար, որ գերատեսչություններն ու այլ ենթաբաժինները ընդգծում են իրենց կարիքը, իսկ ՀԿ-ները վստահաբար անելիք ունեն այս ուղղությամբ: Սակայն հավասարապես կարևոր է այն աշխատելաճը, որով աշխատում են ՀԿ-ները Հայաստանում:

Համագործակցության շարունակականության ու կայունության մասին զրույցները մեզ տանում են նաև ինֆորմացիայի պահպանման և փոխանցման, ինչպես կարողությունների հզորացման դաշտ, որը կարող ենք անվանել ընդհանուր առմամբ ինստիտուցիոնալ հիշողության ձևավորումը: Ընդհանուր առմամբ երևույթը բնորոշ է թե՛ պետական, թե՛ քաղհասարակության ոլորտներին, որն

արտահայտվում է մասնագետների հոսունությամբ, ինֆորմացիայի փոխանցման մեխանիզմների բացով, կամ ընդհակառակը պարտադրված աշխատանքային մշակութով ու «այլախոհների ֆիլտրմամբ» (վերջինս բնորոշ է ՀԿ-ներին): Զրուցակիները ընդգծում են, որ երբեմն որոշ գործողություններ և համապատասխանաբար արդյունքներ պայմանավորված են այն անձնանցով, որոնք անմիջապես ներգրավված են գործընացում: Այս երևույթը թե՛ հնարավորություններ, թե՛ ռիսկեր է պարունակում: Բացասական կողմերից մեկը ներկայացվում է հետևյալ կերպ՝ «պետական ապարատում այն տավարությունն է, որ ամեն նորը ոգևորված գալիս է ու փորձարկում է նոր բան [...] եթե չի ստացվում, ապա համակարգը ճահճի նման հետ է քաշում...», մյուս կողմից դրական կողմերից ընգծվում է հետևյալը՝ «պետք է գիտակցենք, որ մեր երկրի փոքրությամբ պայմանավորված մենք ունենք այն արտոնությունը, որ կարող ենք նստել ու պետական օղակների հետ քննարկումներ ունենալ»: Ակնհայտ է, որ հաղորդակցումը երկկողմանի է, չկան մշտական հաղթող կամ մշտական պարտվող խաղաքարտեր, կարևոր է կարողանալ ճկուն լինել ու պրոֆեսիոնալ և համառորեն աշխատել հանուն ընդհանուր նպատակի:

Կարևոր է արձանագրել նաև հասարակական ոլորտի ֆեմինիստ փորձագետներից մեկի առանձնացող կարծիքը 1325-ի շրջանակներում պետության հետ ԲՀԿ-ների համագործակցության վերաբերյալ: Վերջինս կիսվում է տարիների ընթացքում իր պետական ու ոչ պետական կառույցների հետ հանրության կողմից սիրելի «արդյունավետ» համագործակցության իր անցած ճանապարհի մասին և հիմնվելով արդեն իսկ քննադատության ենթարկված «անգենդեր» (թարգմանված է *genderless բառից, որն օգտագործել է փորձագետը*) փաստաթղթի, ցուցիչների և ֆինանսական հատկացումների անորոշությանը և հետազոտության շրջանակներում քննարկված և քննադատված այլ թեմաների վրա, հանգում այն եզրակացությանը, որ պետք է կտրուկ ու արմատական մոտեցում ցույց տալ «մենք պետք է ամեն ինչ անենք, որ ոչ այս բանաձևը լինի, ոչ էլ իր գործողությունների ազգային ծրագրերը, որովհետև սրանք ավելի շարժվածություն, քան լավություն են անում: Այս շրջանակը մեզ ստիպում է ավելի քիչ պահանջկոտ լինել, բարձրաձայն չասել այն, ինչ ուզում ենք»:

Փորձագետը հղում անելով 1325-ի և վերջինինս հաջորդած բանաձևի արդյունքների բացակայությանը հավատացած է, որ այս բանաձևերն օգտագործում են ԲՀԿ-ների ներուժը և

սահմանափակում գործողությունների ու պահանջների շրջանակը: Մինչդեռ բանաձևից դուրս առավել մեծ օրակարգեր կան, որոնք շուրջ ևս պետք է պայքար տանել:

Եզրակացություն

1. ՄԱԿ ԱԽ «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» բանաձևն իրավական հենանիշ և քաղաքականության ուղենիշ է հանդիսանում պատերազմի և խաղաղության համատեքստում գենդերային խնդիրները բարձրաձայնելու և գենդերային ուղղորդման համար:
2. Անվտանգության խորհրդի որոշումներն ենթակա են պարտադիր կատարման անդամ պետությունների կողմից: Այս լիազորությամբ պայմանավորված 1325 բանաձևը տարածեց գենդերային առաջնահերթությունը՝ պետությունների համար ստեղծելով նոր գործընկերային հնարավորություններ ՄԱԿ-ի և ԲՀԿ-ների հետ:
3. ԱԽ բանաձևերի ընտրողական իրականացումը և սանկցիաների մեխանիզմների բացակայությունը բանաձևի իրականացման հետ կապված մարտահրավերներից են:
4. Արժեքների տեսանկյունից բանաձևը բնույթով գենդերային զգայուն քաղաքականության արդյունք է և կրում է խաղաղաշինական բաղադրիչ, որոնք սակայն երկուսն էլ ենթակա են խորքային քննադատության ինչպես Ֆեմինիստական և խաղաղության ուսումնասիրությունների տեսանկյուններից, այնպես էլ գործնականում գենդերային և խաղաղության հարցերով զբաղվող մասնագետների կողմից, քանի որ դրույթներն ենթակա են տարբեր մեկնաբանությունների:
5. Առաջնահերթությունների և վերջնարդյունքների տեսանկյունից բանաձևի առանցքում պատերազմի և բռնության բացառումն է և միաժամանակ անվտանգության ու անուղղակիորեն խաղաղության կերտումը, որին հասնելու ճանապարհին կարևորվում է կանանց դերը՝ որպես ակտիվ դերակատարների:
6. Ֆեմինիստ ուսումնասիրողները և քաղհասարակությունը մեծ ակնկալիքներ է ձևավորել բանաձևի շուրջ, որը պետք է բավականաչափ ընդհանրական լիներ բոլոր անդամ երկրների կողմից աջակցություն ստանալու համար: Նույն տրամաբանությունը փոխանցվել է նաև ազգային ծրագրերին, որոնք ևս քննադատության են ենթարկվում ընդհանրական ու ոչ արդյունավետ լինելու համար:
7. Հետևելով ԱԽ որոշումների պարտադիր սկզբունքին՝ ՀՀ Կառավարությունը ընդունել է «Կանայք, խաղաղություն և անվտանգություն» գործողությունների ազգային երկու ծրագիր (2019-21 և 2022-24), որոնք ընդհանուր առմամբ հավատարիմ են բանաձևի հիմնական

ուղղություններին (կանխարգելում, պաշտպանություն, մասնակցություն, վերականգնում և օժանդակություն) և ընդհանուր առմամբ թիրախում պահում են կանանց:

8. Հայաստանում բանաձևի տեղայնացման առաքելությամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի կատարողականի ընդհանուր գնահատականը բարձր է, կարևորվում է մասնակցայնությունը և մասշտաբայնությունը: Մարտահրավերներից ընդգծվում է գենդերազգայնության ընդհանուր մեկնաբանության բացը և համայնքի հետ ուղիղ աշխատանք տանող խմբերի սակավ ներկայացվածությունը (ՔՀԿ, ՏԻՄ և այլն):
9. Երկրորդ ԳԱԾ-ը անհամեմատ ավելի բարձր գնահատականի է արժանացել, հատուկ ընդգծվում է մշակման աշխատանքների համակարգված լինելը, այնուամենայնիվ մասնագետները առանձնացնում են տեղայնացման աշխատանքների հետ կապված մի շարք մարտահրավերներ, որոնք պայմանավորված են՝ ընդհանրական և ոչ չափելի սահմանումներով, ՔՀԿ տարբեր օղակների հետ և անմիջապես թիրախ խմբերի հետ ոչ արդյունավետ հաղորդակցմամբ և այլն:
10. Թեպետ և՛ բանաձևը, և՛ ազգային ծրագրերը առանցքում դնում են կանանց մասնակցությունն ու անվտանգությունը, ազգային մակարդակում դրանց հասնելու ճանապարհը ինքնին հեռանում է խաղաղ ճանապարհով կոնֆլիկտների լուծման տրամաբանությունից:
11. Սակավ տեղեկացվածություն ունենք միջազգային գործընթացների վերաբերյալ և թյուրընկալում բանաձևի իրականացման շուրջ, այլև խեղված ակնկալիքներ տարբեր հասցեատերերի նկատմամբ:
12. Դերակատարներից յուրաքանչյուրը լավատեղյակ է իր համապատասխան գործառույթների շրջանակներում իրականացվող միջոցառումներից, սակայն հաճախ չի պատկերացնում, թե նշված միջոցառումները մի կողմից՝ երկարաժամկետ կտրվածքում ինչ նպատակի/վերջնարդյունքի են ծառայում, իսկ մյուս կողմից՝ կորսված է կապը որպես մեկ ամբողջություն ազգային ծրագրի տարբեր բաժինների միջև:
13. Կարելի խնդրականացնել փաստաթղթի ընդհանուր վերջնարդյունքը՝ արդյոք փոփոխությունների սլաքը ուղղված է դեպի անվտանգություն և խաղաղություն, թե դեպի պատերազմի հետևանքների հաղթահարում և պատերազմին պատրաստվածություն:
14. Ճեղքվածք ենք նկատում մի կողմից ԳԱԾ փաստաթղթի բովանդակության և վերջինիս մեկնաբանության մեջ, և մյուս կողմից կենտրոնական իշխանության օղակի և համայնքային աշխատանքի գործնական կատարման միջև:
15. ԳԱԾ սահմանված ցուցիչները իրականում միշտ չէ, որ չափելի են և հաշվի առնելով, որ առկա չէ սկզբնական վիճակագրություն և տվյալներ բովանդակության շուրջ, ապա մշտադիտարկման և գնահատման աշխատանքներում կունենանք անճշտություն:

16. Ազգային ծրագրի մշակման աշխատանքներում նկատվում է ադմինիստրատիվ, տեխնիկական և մեթոդական հագեցվածության բացը: Կարևոր է նաև ռեսուրսների ներգրավում՝ մարդկային և ինտելեկտուալ:
17. «Կին եմ, ուրեմն գենդերազգայուն եմ» օրինաչափությունը չի համապատասխանում իրականությանը, կարևոր է կանանց ոչ միայն թվային, այլև բովանդակային ներգրավվածությունը, ինչպես նաև իրապես գենդերազգայուն մոտեցումների կիրառումը տեղայնացման բոլոր փուլերում:
18. Գենդերազգայունության մասին քննարկումները դեռևս իրենց գաղափարական համաձայնությանն ու ընդհանուր հայտարարին չեն հասել այս կամ այլ բովանդակության շուրջ, ուստի դժվար է ԳԱԾ փաստաթղթերը որակել գենդերազգայուն:
19. ԳԱԾ-ը իր շուրջ է համախմբել 11 պատասխանատու գերատեսչություն և 7 ենթաբաժիններ, ինչպես նաև առնվազն 10 աջակից կառույցներ, ինչը բնութագրում է օրակարգը որպես գործընկերային: Համագործակցության ձևաչափերը տարբերվում են ու առանձնանում ինչպես արդյունավետությամբ, այնպես էլ մարտահրավերներով:
20. Թիրախ խմբի ընդհանրացումը ի դեմս կանանց, և՛ հնարավորություն է տալիս դիտարկելու փաստաթուղթը որպես ներառական ու միջառարկայական (ինտերսեկցիոնալ), և՛ բովանդակությամբ բացառող, քանի որ անուղղակի դիտարկում ենք կանանց որպես զոհ կամ առանձնացնում ենք կանանց միայն այն շերտը, որոնք կարող են այս կամ այն կերպ նպաստել անվտանգությանը (ոչ խաղաղությանը):
21. Երբեմն դերակատարների ու հասցեատերերի միջև կապը անորոշ է, քանի որ որոշ նպատակներում հասցեատեր կամ թիրախ խումբ կարող ենք համարել նաև որոշ գերատեսչությունների կամ կառույցների, որոնք այլ տեղերում հիմնական դերակատարներ են: Միևնույն ժամանակ կանայք կան երկու տեղում էլ:
22. Ֆինանսական միջոցների ներդրման բացակայությունը ներքին ու արտաքին ռիսկեր է պարունակում ԳԱԾ իրականացման համար:
23. Արցախյան պարետազմը և համավարակը սառեցրել են ԳԱԾ աշխատանքները, ինչը խոսում է այն մասին, որ երկրի քաղաքական, տնտեսական, սոցիալական իրավիճակը և այլ առանձնահատկությունները կարևոր արտաքին գործոններ են, որոնք պետք է հաշվի առնել գործողությունների մշակման փուլում:
24. Տարանջատելով համագործակցության ձևաչափերը ըստ կողմերի միջև ուժի հարաբերակցության՝ ունենք հավասարը հավասարի, կախյալ, անկախ և միջանկյալ գործընկերություններ: Արդյունավետ համագործակցությունը համար ելակետային ենք համարում փոխադարձ վստահության և թափանցիկ հաղորդակցման բաղադրիչները:

25. Պետություն-քաղհասարակություն հարաբերություններում կան փորձի վրա հիմնված որոշակի նախատրամադրվածություններ որոնք հետ են պահում աշխատանքն իրապես համագործակցային ուղղությամբ տանելուց:
26. Ակնհայտ է, որ ԲՀ դաշտը համասեռ չէ, ունի ինֆորմացիայի և ազդեցության տարբեր մակարդակներ և հնարավորություններ: Առանձնացնելով միջազգային կառույցներին՝ կարող ենք վերջիններիս տալ կապողակի կամ միջնորդի դեր պետության և տեղային ՀԿ-ների միջև հարաբերություններում:
27. Ինստիտուցիոնալ հիշողությունը փխրուն է թե՛ պետական համակարգում, թե՛ քաղհասարակական ոլորտում, որն արտահայտվում է մասնագետների հոսունությամբ, ինֆորմացիայի փոխանցման մեխանիզմների բացով, կարողությունների անկատարությամբ:

Առաջարկներ

1. Հաշվի առնելով, որ գործողությունների ազգային ծրագրերը բանաձևից ժառանգել են նաև ընդհանրական ձևակերպումները, ինչը խոչընդոտում է ծրագրի լավագույնս իրականացմանը, խորհուրդ է տրվում առավել ինքնուրույնություն ստանձնել և վստահ լինել, որ նպատակները տեղին են՝ կարիքի վրա հիմնված (անգլ. relevant) և չափելի:
2. Խորհուրդ է տրվում ավելի ամուր տրամաբանական կապ կառուցել նպատակ-գործողություն-ցուցիչ շղթայում, և վստահ լինել, որ վերջնարդյունքը նպաստում սահմանված առաջնահերթություններին:
3. Տարընթերցումներից և բազմակի մեկնաբանություններից խուսափելու նպատակով՝ կոչ է արվում սահմանել բոլոր հասկացությունները և ընդհանուր հայտարարի գալ այնպիսի կարևոր հարցերի շուրջ ինչպիսիք են՝ գենդերազգայնության համապարփակ սահմանումը, խաղաղաշինական բաղադրիչի էությունը, միջառարկայական մոտեցման երաշխիքը, թիրախ խմբի ընդգրկումն պատկերը և այլն:
4. Բարձրացնելով ԳԱԾ-ի կարևորությունը՝ խուսափել կրկնակի հաշվետվություններից, նեղացնել գործողությունների շրջանակը, վստահ լինել արդյունքների եզակիության մեջ, կազմակերպել ավելի ակտիվ բովանդակային վերահսկողություն և հաշվետվողականություն աշխատանքային արդյունքների նկատմամբ:
5. Բանաձևի և ԳԱԾ-ի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացման նպատակով՝ հնարավոր բոլոր գործընթացներում ներգրավել տարբեր օղակներից դերակատարների և տարածք տրամադրել վերջիններիս հետադարձ կապի համար:
6. Հավատարիմ մնալով բանաձևի սկզբունքներին՝ համագործակցության հնարավորություններ ստեղծել ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ ձևաչափերով՝ փոփոխությունը ուղղել ոչ միայն վերևից ներքև, այլև բաց լինել ներքևից վեր փոփոխության առջև:
7. Ընդգծելով տարբեր կարողունակությունների (գիտելիք, հմտություն, կարողություն) կարիքը աշխատանքի բոլոր փուլերում և բոլոր մակարդակներում՝ ջանքեր ներդնել կարողությունների զարգացման ուղղությամբ, ինչպիսիք են՝ արդյունավետ հաղորդակցում, հանրային կապեր, գործընկերություն և ցանցայնություն, բանակցություններ, ֆասիլիտացում կամ այլ հմտություններ:
8. Ընդգծելով կոնֆլիկտի և գենդերային թեմաների նկատմամբ զգայունության կարևորությունը՝ բոլոր մակարդակներում՝ ջանքեր ներդնել բոլոր օղակներում մասնագետների զգայունության բարձրացման ուղղությամբ: Վստահ լինել, որ այս ջանքերը շարունակական են և հասանելի բոլոր այն մասնագետների համար, որոնք իրենց

աշխատանքի շրջանակներում առնչվում են այս զգայուն թեմաների հետ (որոշումների կայացումից մինչև ծառայության մատուցում):

9. Աշխատել ռեսուրսների գեներացման ուղղությամբ, մասնավորապես պետական ֆինանսավորման ուղղությամբ իրականացնել լրբբինգ, արտաքին ներդրումների և ֆոնդիայիայթման ուղղությամբ գործողություններ:
10. Աշխատել կարիքների, խնդիրների և ռեսուրսների քարտեզագրման ուղղությամբ՝ ներառելով գործընթացում բազմամասնագիտական թիմ, և ապահովել սերտ գործընկերություն տեղական ՀԿ-ների հետ:
11. Ծրագրի մշտադիտարկման և գնահատման աշխատանքները ավելի ճշգրիտ և հավաստի դարձնելու նպատակով տարածք տրամադրել տեղական ՀԿ-ներին, իսկ արդյունքները դարձնել հասանելի բոլոր դերակատարների համար:
12. Կարևորելով թիրախավորված և հասցեական արդյունքը և նպատակ հետապնդելով բազմապատկել փոփոխության ծավալը՝ հանրային իրազեկվածության և զգայունության բարձրացման աշխատանք տանել, ինչը հնարավոր է կազմակերպել ինչպես ԳԱԾ-ի շրջանակներում, այնպես էլ դրանից դուրս:
13. Կարևորելով ԲՀԿ-ների դերը ԳԱԾ-ի տեղայնացման աշխատանքներում՝ վերջիններիս խորհուրդ է տրվում շարունակաբար ինքնակրթվել, վերազինվել գիտելիքներով և գործիքներով աշխատելու տարբեր դերակատարների և թիրախ խմբերի հետ:
14. Կարևորելով ինստիտուցիոնալ հիշողության կարևորությունը Կանայք, խաղաղություն և անվտանգություն օրակարգի անընդհատականության և շարունակականության ապահովման տեսանկյունից՝ ստեղծել մնայուն որակյալ ռեսուրսներ, մեխանիզմներ և գործընթացներ աշխատանքը դյուրին կազմակերպելու համար, կառուցել մնայուն ամուր կապեր բոլոր հասցեատերերի միջև:



Շվեդիա
Sverige



womenofarmenia.org